



ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 90

12 ԱՊՐԻԼ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Երրորդ տարի 12 Ապրիլ 1913 Թիւ 90

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն որսագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողներն»:

Նամակ Կաթող. Սէրի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Բ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ, 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամբաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

1. Դրժնու աղիւսը:— 2. Աղիւսալի գիրք մը:

Հոռովմէական Ս. Եկեղեցին աստուածային իմաստութեամբ եւ Հոգւոյն Սրբոյ ազդեցութեամբն է որ իր հայրախնամ ջանքն ու հսկողութիւնը կը նուիրէ հաւատացելոց ընթերցանութեան եւս, ու մասնաւոր Ս. Ժողով մը հաստատած է գրաքննական, որուն անունը դրած է գրացուցակի (Index), անոր համար որ անիկա անդադար կը զբաղի հրատարակուած գրքերը խիստ քննութեան մը քուրայէն անցընելու եւ զիս գրքերը ուրիշները արգելքի տակ առնելու, որպէս զի հաւատացեալք զանոնք չկարդան: Յիշաւ մայրական է Ս. Եկեղեցւոյ այդ գուրգու-

րանքը, քանզի մայր մը իր զաւակը անզսպելի փութկոտութեամբ կը զգուշացնէ կրակէն՝ որ կ'այրէ, օձէն՝ որ կը խայթէ, թռնէն՝ որ կը սպաննէ. չկրնար ըլլալ մայր մը, ո'րքան ալ անգուլթ, որ իր հոգեհատորը գիտակցաբար մատնէ ի մահ: Եւ ահա Ս. Եկեղեցին ալ ճշմարիտ մայր ըլլալուն համար զէշ գրքերը կ'արգելու. ուստի ի բնական օրինաց ունեցած իր իրաւունքը կը գործածէ: Եւ որովհետեւ Քրիստոսի Աստուծոյ՝ իր անտեսանելի Գլխուն, կը փոխանորդէ Ս. Եկեղեցին երկրիս վրայ, անոր համար ալ յաստուծային օրինաց եւս պարտական է իրեն յանձնուած ոչխարները զգուշացնելու թունաւոր խտերէն. չկրնար աղեգորով մայրս մեր Ս. Եկեղեցի, փոխանակ հացի եւ անունդի տալ իր զաւակաց քաւ կամ օձ կամ կաւի: Ուրիշն իր բացարձակ պատրիարքի եւ իրաւունքին մէջն է երբ իշխանաբար կ'արգելու

իր զաւակներուն՝ կարգաւ գէշ գրքերը, զորոնք կը գրեն ու կը հրատարակեն անտարբեր, անխիղճ, անհաւատ ու անաստուած մարդիկ, Քրիստոսի ու եկեղեցւոյ ու հոգւոց փրկութեան ռիսքիմ ու յայտնի թշնամիները։ Որովհետեւ այդ տեսակ գրքերը օձէն աւելի թունաւոր, կարիճէն աւելի անգութ են. մատաղերամ մանկանց հոգիներուն վարնանաբոյր ծաղիկը կը թոռմեցնեն. պերճապերճ տպագրութեանց և ոսկեփայլ կազմերու, փափկագիր զարդապիր հիւսուածներու, յանկուցիչ ոճերու մէջ կը ծածկեն մահը, ինչպէս իժ մը ծաղկամարգերու մէջ. և անխորհուրդ պատանին կը սպաննուի երեւակայութեամբ՝ որ կ'աղտեղի ի սպառ, դատողութեամբ՝ որ կը մոլորի յաւէտ, կամբով՝ որ կը տկարանայ, կ'անբարոյականայ ցմահ, հոգւով՝ որ կ'անամանայ զրկուելով բանի և իմացողութեան և հաւատքի գանձէն, և շատ անգամ նաև մարմնովը, որ ախտերու և անզուսպ կրքերու մաքնուած, կը հիւծի, կը մաշի, կը մարի, կը մեռնի։ Մարդկային ցեղի ամենաոխերիմ թշնամիներն են գէշ գրքերը. պարտականութիւն և իրաւունք ունի Ս. Եկեղեցին զանոնք արգիլելու... Բայց ի՞նչ կը նշանակէ այդ քրքիջը, այդ անմիտ քրքիջը որ ալետատան կը ծաւալի քաղաքներէն անդին, այդ քրքիջը որ հորիզոնները կ'անցնի, կ'առատանայ, դժոխային աղմուկի մը կը փոխուի և կը դղրդէ տիեզերքը... այդ քրքիջը հնչեցուցին անցած մի քանի դարերն ալ. այդ քրքիջը դժոխոց մէկ քրքիջն է. անհաւատ փիլիսոփաներու, անկրօն աղանդաւորներու, ազաւս մեծամիտ, հեստ և ըմբոստ մարդկութեան քրքիջն է ահաւոր և անվերջ և յուսահատ, որ կը քննադատէ, կը ծաղրէ, կը դատապարտէ Ս. Եկեղեցւոյ այդ իրաւունքը. կը կատղի թէ ինչո՞ւ Ս. Եկեղեցին կը պաշտպանէ բարոյականը, զՔրիստոս, զԱստուած. կ'ուզէ որ իր կեղծ ու զեղծ ու խարդախեալ ապրանքը մաքս չունենայ, կը պահանջէ որ թունալից ուտելիքը չտախրալուծուի, իր մահափիւռ համաճարակ մանրեանքը մանրագէտի չենթարկուին. կ'ուզէ ազատ վաճառական ըլ-

լալ, անբարոյացնել և սպաննել մարդկութիւնը։ Ո՛չ այսպէս. Ս. Եկեղեցին յաւիտեանս պիտի չգրծէ իր պարտքին, կոչումին, իրաւունքին, մինչեւ ցկատարած աշխարհի պիտի տքնի, պիտի հսկէ, պիտի քննէ իբրեւ Մայր, իբրեւ Ուսուցիչ, իբրեւ Դատաւոր. պիտի ըմբերանէ անզուսպ լեզուները, պիտի խորտակէ թունակաթ գրիչները, պիտի արգելու և այրէ անկրօն և անբարոյացուցիչ գրքերը. ուստի և անհաւատութիւնը, մոլորութիւնը, ոճիրները, մահը. ուստի պիտի աշխատի երջանկացնել մարդկութիւնը։ Մանաւանդ այս դարուս մէջ, յորում հետաքրքիր ու անզուսպ ընթերցման պապակը կը տանջէ գլխաւորաբար երիտասարդ սերունդը, որ անփորձութեամբ կը գահավիժի անդունդին մէջ. և անկրօն ու անպիտան գրքեր ու թերթեր կարծես հեղեղօրէն կ'ողողեն զաշխարհ։

Նոյն իսկ հեթանոսութեան իմաստունները աս նախազգուշութիւնները կը քարոզէին։ Պլատոն իւր Ընկերհաշտութեան մատենանին Բ. գրքին մէջ պատգամ կու տար որ գէշ գրքերն ու անոնց հեղինակները պէտք է քաղաքէն բնաջինջ ընել, որովհետեւ անոնք իբրեւ հայրենեաց մատնիչներ նկատուելու են։ Նոյնպէս Արիստոտէլ Քաղաքագիտութեան Ը. գրքին մէջ կը սորվեցնէ որ չար գրքերը պէտք է ջնջել, և քաղաքացին, մանաւանդ եթէ երիտասարդ է, բնաւ չյանդգնի անոնցմով իր աչքերն աղտոտել։ Հռոմայեցիք, ինչպէս կը պատմէ Տիտոս Լիւիոս, խիստ գրքամոլութիւն մը ունէին, ու գէշ գրքերը անողոքաբար կ'այրէին։ Աթենացիք Պրոտագորասը աքսորեցին իր անկրօն մէկ գրքին համար, և նոյն պատճառաւ Սպարտացիք Արքիլոկն ի մահ դատապարտեցին։ — Եւ հիմա տէրութիւնները իրաւունք ունին օրէնքով խիստ գրքամոլութիւն (ceusure) ի գործ դնելու քաղաքական պատճառներով. ինչո՞ւ ուրեմն Ս. Եկեղեցին պիտի արգիլուի իր աստուածատուր իրաւունքն ի գործ դնելէ, զգուշացնելու իր զաւակները այն ընթերցումներէն, որ կ'ապականեն սիրտն ու բարոյք, որ կը սպաննեն հոգին յաւիտենա-

պէս : Ինքն է պահապան Կրօնքի և Բարոյից .
ինքը պիտի արածէ Քրիստոսի ոչխարներն ու
զառնուկները . Առաքելոյ հետ իրեն ըսաւ
Քրիստոս . Առաքելոցէ՛ք ամեն ազգերը, սոր-
վեցուցէ՛ք անոնց : Ինքն է վարդապետ հա-
ւատոյ ու բարոյականութեան , դատաւոր և
վճռատու բարոյ և չարի , պահապան քրիս-
տոնեայ և ընդհանուր մարդկային ընկերու-
թեան : Միւս բոլոր բաժանեալ եկեղեցիք և
աղանդներ սնդոր են ամենեւին և չեն կրը-
նար ու է արգելք դնել չարութեան հեղե-
ւին : « Պատմութենէն պիտեմ , ըսաւ ոչ-կաս-
կածելին Օկիւսթէն Թիէրի , որ աստուածա-
յին ու տեսանելի իշխանութիւն մը անհրա-
ժեշտ է՝ մարդկային ցեղի կեանքին զար-
գացման համար : Արդ Կաթողիկէ եկեղեցիէն
դուրս ինչ որ կայ , անկարող է և առանց
ճոխութեան : Ուստի Կաթողիկէ եկեղեցին է
այն իշխանութիւնը զոր ես կը փնտռեմ , ու
ես անոր կը հպատակիմ , կը հաւատամ ա-
նոր սորվեցուցածին . կը հաւատամ Հաւա-
սաւթին : » Եւ բողոքականն Հուրթըր ըսած է .
« Եթէ քրիստոնէութիւնը կրցաւ տոկալ այն-
քան հալածանաց և ծաղկիլ դարերու մէջ ,
այս եղաւ ի շնորհս այն մեծ սկզբունքին ու-
րով եկեղեցին կը միացնէ , կը հսկէ ու կը
բարոյացնէ » :

Ուստի մեր թերթն ալ , իբր Կաթողիկէ՝
հաւատարիմ իր կոչման ու պարտուցը , երբ
հարկ ըլլայ՝ մատնանիլ պիտի ընէ կրօնական
ու բարոյական սկզբունքներու քանդիչ , մա-
տաղ մտքերու և սրտերու թունաւորիչ գը-
րութիւնները : Գալ թիւ ով պիտի նշաւակենք
ժպիւրհ գրիչ մը , որ աղեհալի գիրք մը նե-
տեց հայ հրապարակին վրայ . . . :

ԹՈՒՂԹ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

(Շար.)

Ոոստովանահայրը , այս կերպով ըն-
տրուելէ վերջ , խոստովանանքի եւ պատ-
ուիրեալ գործերու կատարման համար որոշ-
ուած Յոբելեանի ամբողջ տեւողութեան մի-
ջոցին , պիտի կարենայ ապաշխարողը արձա-

կել այս անգամուան համար եւ ներքին առ-
եանի մէջ միայն , ամէն բանադրանքէ , կա-
խակայութենէ , եւ ուրիշ եկեղեցական վը-
ճիւղներէ եւ դատակնիքներէ , որ տրուած եւ
իբր պատիժ սահմանուած են յիշաւանց կամ
ի մարդոյ որ եւ է պատճառաւ նաեւ անոնցմէ
որ վերապահեալ են տեղեաց վիճակաւոր-
ներու եւ Մեզի , կամ Ս . Աթոռին , նոյն իսկ
առանձինն եղանակաւ , եւ որոնց արձակումը
հասարակօրէն չի բովանդակուիր ամէնէն ըն-
դարձակ առանձնաշնորհմանց մէջ անգամ :
Նոյնպէս պիտի կարենայ փրկարար եւ պատշաճ
ապաշխարանք մը դնելէ եւ իրաւանց միւս
տրամադրութիւնները լրացնելէ յետոյ՝ արձա-
կել ամէն մեղքէ , ոճիրներէ որչափ ծանր ըլլան
եւ սոսկալի եւ նոյն իսկ վերապահեալ՝ վի-
ճակաւորներու , Մեզի , եւ Առաքելական Գա-
հուն :

Գալով հերետիկոսութենէ դարձողներուն ,
ասոնք ըստ կանոնական իրաւանց , իրենց մո-
լորութիւնները մերժելէ վերջ կ'արձակուին :

Ոոստովանահայրը պիտի կարենայ նաեւ
փոխել ուխտերն եւ երգումները , նոյն իսկ
Առաքելական Գահուն վերապահեալները ,
ուրիշ բարեպաշտական գործերու , ի բաց առ-
եալ սակայն ողջախոհութեան եւ կրօնաւո-
րութեան ուխտերը եւ երրորդի մը նկատ-
մամբ պարտականութիւն բովանդակողները ,
եւ մեղքէ զգուշանալու համար գրուած ա-
պաշխարութեան ուխտերը , միայն թէ խոս-
տովանահօր կողմէ եղած փոխանակութիւնն
ալ նոյնպէս մեղքէ նախազգուշանալու մա-
սին ազդեցիկ չըլլայ :

Ոոստովանահայրը պիտի կարենայ նաեւ
տնօրինել Ս . Աստիճաններով ճոխացած ա-
պաշխարողները , եթէ կրօնաւոր իսկ ըլլան , ա-
մէն ծածուկ անկանոնութենէ , որ կրնայ ար-
գելք ըլլալ նոյն Աստիճաններուն գործածու-
թեան եւ կամ բարձրագոյն Աստիճաններու
ընդունելութեան :

Ներկայիւս չենք տար իշխանութիւն տը-
նօրինելու կամ տնօրինել տալու միւս ան-
կանոնութիւնները որ յառաջ կու գան կամ
ոճիրէ կամ թերութենէ՝ կամ հրապարակա-
կան կամ ծածուկ յանցանքէ մը եւ ո եւ է

կերպով կրուած յարակից անընդունակութենէ կամ անբաւականութենէ . եւ վերստին ատակ ընելու Աստիճաններու գործածութեան կամ բարձրագոյն Աստիճաններու ընդունելութեան , նոյն իսկ ներքին ատենի մէջ :

Նոյնպէս չենք փոխեր մեր Երջանկայիշատակ նախորդ Բենեդիկտոս ԺԴ . Ի ԽՈՐՀՈՒՐՊ Ապաշխարութեան բառերով սկսող եւ մասնաւոր յայտարարութիւններ պարունակող Սահմանադրութիւնը :

Նոյնպէս ներկայիւս չենք փոխեր անոնց կանոնական կացութիւնը որ Մեր , կամ Ս . Գահուն , կամ Առաջնորդի մը եւ եկեղեցական դատաւորի մը կողմէ յականէ յանուանէ բանադրուած , կախակայուած , արգիւլուած , կամ յիշեալ զատակնիքներուն մէջ ըստ օրինաց ինկած ծանուցուած են հրապարակաւ . միայն թէ , Յոբելեանի միջոցին , հաստեցում եւ իրաւախոտութիւն ըրած չըլլան : Եթէ Յոբելեանի ժամանակ , չեն կրցած , իրենց խոտովանահօր դատման համեմատ , հատուցանել , կը չնորհենք որ կարենան արձակում առնուլ ներքին ատենի մէջ՝ լոկ Յոբելեանի Ներդրութեան ստացման համար , պարտադրութեամբ հարկ եղածը կատարելու երբ կարելի ըլլայ :

Ասոր համար զօրութեամբ սուրբ հնազանդութեան եւ ներկայիս պարունակութեամբ խստիւ կը հրամայենք եւ կը պատուիրենք ամէն տեղեաց վիճակաւորներու , իրենց փոխանորդներուն եւ պաշտօնեաներուն , եւ անոնց չգտնուած պարագային , ամէն հոգ հոգւոց ունեցողներուն , որ այս թուղթէն ձեռագիր կամ տպագիր օրինակներ ընդունելուն պէս , հրատարակեն եւ հրատարակել տան իրենց եկեղեցիներուն , թեմերուն , դաւառներուն , ոստաններուն , քաղաքներուն եւ ուրիշ տեղերու մէջ . նշանակեն Աստուծոյ ժողովուրդին՝ այն եկեղեցիները զորս այցելելու են . եւ աստուածային խօսքին քարոզութեամբ պատրաստեն զայն՝ Յոբելեանը վաստկելու :

Հակառակ ամէն Առաքելական Սահմանադրութեանց եւ կարգադրութեանց , յատկապէս անոնց՝ որոնցմով արձակում տալու իշ-

խանութիւնը ինչ ինչ պարագաներու համար վերապահեալ է ժամանակի Քահանայապետին , այնպէս որ ներդրութեանց կամ իշխանութեանց նմանօրինակ կամ տարբեր շնորհումներ մէկու մը չկարենան տրուիլ , միայն թէ այդ մասին որոշ յիշատակութիւն չըլլայ կամ մասնաւոր փոփոխում մը չկատարուի . հակառակ նոյնպէս նմանութեամբ (ad instar) ներդրութիւններ շնորհելու խափանարար կանոնին , հակառակ ամէն սահմանադրութեանց , ո եւ է Կարգերու , Միաբանութեանց եւ Հաստատութեանց , նոյն իսկ անոնց որ երդումով , Առաքելական հաստատումով կամ ուրիշ ո եւ է նուիրագործումի եղանակով ձոխացած են . եւ նոյնպէս հակառակ ամէն սովորութիւններու , առանձնաշնորհումներու , շնորհագիրներու , առաքելական թուղթերու , որ տրուած , հաստատուած եւ նորոգուած են ո եւ է եղանակաւ , այս Կարգերուն , Միաբանութեանց եւ Հաստատութեանց եւ իրենց լոյր անդամներուն . արդ այս ամէնուն եւ իւրաքանչիւրին , նոյն իսկ անոնց զորս պէտք էր իրենց ամբողջ բովանդակութեան համար յիշել յատկապէս , մասնաւորապէս , որոշակի , առանձնակի եւ ոչ լոկ ընդհանուր համագորբանաձեւերով , կամ որոնց մասին ուրիշ վերապահեալ ձեւ մը գործածուելու էր , Մենք նկատելով անոնց բովանդակութիւնը իբրեւ ըստ բաւականի բացատրուած ներկայ թուղթով ; եւ անոնց մասին գործածուելիք աւանդական ձեւը իբրեւ պահուած , կը ջնջենք զանոնք մասնաւորապէս յականէ յանուանէ այս անգամուան համար , վերոյգրեալ արդիւնքը ստանալու նպատակաւ . հակառակ ամէն ներհակմաներու :

Վերջապէս որպէսզի ամէնքը տեղեակ ըլլան մեր ներկայ թուղթին , որուն ամէն տեղ հասնիլը կարելի չէ , կ'ուզենք որ ամէնուրեք եւ ամէն ժողովուրդներու քով միեւնոյն հաւատքը ընծայուի այս թուղթին տպագրեալ եւ հրապարակական նօտարի մը ստորագրութիւնը եւ եկեղեցական պաշտօնէի մը կնիքը կրող օրինակներուն եւ պատճէններուն :

Տրուած ի Հռոմ , Ս . Պետրոսի մօտ , Զկնոսի կնիով , 1913 , Մարտ 8ին , մեր Քահանայապետութեան Ժ . տարին :

(Տեղ ի Կնիոյ)

Ն . Մըռքեան
մասնաւոր հրամանաւ

Ռ . ԿԱՐԴԻՆԱԼ ՄԷՐԻ ՏԷԼ ՎԱԼ
Պետական Քարտուղար

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՅԱՆԱՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

ԺԱ.

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՐԴԱՐ ՎՐԵՃԽՆԴՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱՔԱՆՁԵԼԻՔ ՏԵԱՌՆ ԿՈՄԻՏԱՍԱՅ ՎԿԱՅԻՆ

Մինչեւ հոս համառօտիւ պատմեցինք եւրանելի Տեառն Կոմիտասայ Աստուծոյ ծառային կենաց մի քանի մանրամասնութիւնները, այնչափ որչափ մեր տկարութեամբ կրցանք ափ յափոյ ձեռք անցնել պատմիչներու վկայութիւնները: Տեսանք թէ խընդիրը ուղղափառ կրօնքի շուրջ կը դառնար, և անոր ծաւալումը արգիլելու համար, հայ ազգին կղեր և աշխարհիկ մարդոցմէ ոմանք, ժողովրդեան տգէտ մէկ մասը իրենց ձեռք գործիք ընելով, գրգռեցին զանոնք Աստուծոյ ծառային զէմ, որ Նախախնամութենէ որոշուած ընդունելի զոհ և պատարագ մըն էր ի պարծանս և ի բարգաւաճութիւն կաթողիկէ Ս. Հաւատոյ: Սակայն Աստուծոյ արդարութիւնը անտարբեր չմնաց այսքան խժգժութեան զէմ: Ժամ էր ալլեւս աստուածային արդար վրէժխնդրութեան. և այս անիրաւ սպանութեան մասնակիցներուն ամէնքն ալ գրեթէ պատժուեցան տարաժամ և չարաչար մահուամբ: Եւ պարբոս Ալի Փաշան՝ Միտիլլի մէջ խեղդամահ եղաւ: Զմիւռնացի Յովհաննէս պատուրիարք՝ իր աթոռէն դուրս յանկարծամահ կորաւ: Զամիշ-Ֆընտըզ յորջորջուած քահանան Երուսաղեմայ մէջ գարշահոտ վէրքերով մեռաւ: Տէր Յակոբ Գոմէշ քահանան՝ որ եւրանելոյն թշնամեաց մէջ գլխաւորն էր, ճէմիշի մէջ յանկարծամահ եղաւ: Տէր Եսայի քահանան՝ որ չարախօսութեան մուրհակը գրած էր, պատարագած ժամանակ, ձեռքը սրբագործեալ գինւով լի բաժակաւ կաթուածահար ինկաւ: Տէր Սահակ քահանան՝ կենացը վերջին մասին ըերանը որդնոտելով զրաւեցաւ: Տէր Արարհամ Պապիկ քահանա-

յին քեռաղջիկը՝ տղայաբերքի ժամանակ արեան հոսումէն մեռաւ: Գարլ կոչուած մարդը երբ գիշեր մը անկողնէն ելլելով ճէմիշ կը վազէր, յանկարծ պարտէզի վանդակապատի երկու երկաթեայ վանդակներուն մէջ գլուխը մխուելով, անօգնական աւանդեց հոգին: Մանուկ անուն մէկն ալ ծովամոյն եղաւ: Երանելոյն թշնամիներէն ուրիշ մը տեսնելով որ չատեր Տեառն Կոմիտասայ գերեզմանէն բժշկութիւններ կ'ընդունէին, առ նախանձու, ժողովուրդը պաղեցնելու համար հոն լեարդ մը դնել խորհեցաւ, գարշահոտութիւն պատճառելու համար: Եւ գիշեր մը, երբ լեարդ ի ձեռին, տան սանդուխներէն կ'իջնար, վար ինկաւ մեռաւ: Այդ տեսակ մահուամբ մեռան դեռ շատ անձեր, որոնք Տէր Կոմիտաս վկային յիշատակին և կամ թաղման ժամանակ արհամարհոտ կերպով վարուեցան:

Դալով հրաշքներուն, երկու հարիւր տարիներէ ի վեր թէ՛ Երանելոյն Շիրիմին վրայ, թէ՛ ուրիշ տեղեր կամ նոյն շիրիմին հողին գործածութեամբ և կամ նոյն խակ յատուկ ջերմեռանդութեամբ կամ հաստատուն հաւատքով, արձանագործուած կամ ոչ՝ երեք հարիւրի մօտ հրաշքներ և բժշկութիւնք գործուած են բարեխօսութեամբ Երանելոյն Կոմիտասայ. և ասոնցմէ շատերը եկեղեցական իշխանութեան կողմանէ պարտ ու պատշաճ եղանակներով հաստատուած: Մենք ներկայիս կը բաղձանք ասոնցմէ ծաղկաքաղ մի փունջ կազմել: 1792ին, Կ. Պոլսոյ գաղղիական դեսպանին կողակից Տիկին Կոմսուհի Շուազէօլ Կուֆֆիէն, յղութեան պատճառած անհանգստութենէն այն աստիճան ուժ ժաթափ մնացած էր որ յիսուն կամ աւելի օրերէ ի վեր անկողնոյ մէջ անշարժ մնալու մատնուած էր: Շարունակաբար կը փսխէր և չունէր ախորժակ բան մը ճաշակելու. և զինք քնացնելու համար պէտք կ'ըլլար շարունակ բռնադբօսիկ և թմրեցուցիչ դեղեր գործածել: Ուստի կոմսուհին այդ իր դժուար վիճակին մէջ ինք զինք Աստուծոյ յանձնելով, խնդրեց որ ի պատիւ Տիրամօր Ս. Կուսին, իննօրեայ պաղատանք (Neuvaine) մը

կատարուի։ Այդ պաղատանքը կատարող կրօնաւոր քահանան, որ Բերայի Բարուչիններէն Ալպէնկացի Հայր Պետրոս Ֆրանչիսկոն էր, սկսած օրէն մտադրած էր անգամ մը յիշեցնել կոմսուհւոյն՝ այն մեծ շնորհքներն զորս Աստուած կը պարգեւէր Տ. Կոմիտասայ վրէպային բարեխօսութեամբ, բայց որովհետեւ Կոմսուհին կանխելով խնդրած էր Սուրբի մը մասունքը, անոր բարեխօսութեան ապաւինելու համար, կրօնաւորը խրատ տուաւ որ Տէր. Կոմիտաս վկային բարեխօսութեանը յանձնարարէ զինք և ուղեց որ կարգայ անոր վկայութեան պատմութիւնը։ Սակայն այս պատմութեան ընթերցումէն ետքը կոմսուհին զինք առջի վիճակէն աւելի տկար գտնալով, վախցաւ մի՛ գուցէ Աստուծոյ ծառային իր բարեխօսութիւնը իրմէ մերժելուն մի նշանը ըլլայ։ Բայց կրօնաւոր քահանան այդ սխալ գաղափարը կոմսուհւոյ մտքէն համոզիչ խօսքերովյ հանելով, աւելի վստահութիւն ներշնչեց անոր՝ Աստուծոյ ծառային հանդէպ, նա մանաւանդ ուխտ ընել տուաւ որ խնդրած շնորհը ընդունելէ յետոյ, անոր չիրմին ալ այցելէ։ Եւ յորդ օրը կոմսուհին իր վիճակը զգալի կերպով բարեփոխած տեսաւ։ Բախտը դադրեցաւ, ախորժակը բացուեցաւ և հետզհետէ կորսնցողցած ուժը վերստացաւ, այնպէս որ քիչ ժամանակի մէջ կատարելապէս առողջանալով, ընդունած բարիքին համար իւր բարերարին յայտնեց իր երախտապարտ սրտին շնորհակալիքը, ըստ խոստման այցելելով Երանելւոյն չիրիմը։

Յարութիւն, որչի Թոփգարուցի Անդրէասի և Սրբուհւոյ՝ Հայ-Կաթողիկէ ծնողաց, տասնութեկ տարեկան ըլլալով, 1793 Օգոստոս 21ին յանկարծ տեսակ մը գլխու պտոյտ (vertige) ունեցաւ՝ լուսնոտի յատուկ շարժումներով, որոյ ազդեցութեամբ ջիղերն ալ քաշուելով ութ ամիս շարունակ ծունկերուն վրայ գետինը սողոսկիլ սկսաւ, որովհետեւ ծիւրութեան ենթարկուած այն տկար անդամները կանգուն կենալու այլեւս կարողութիւն չունէին։ Հետեւաբար մայրը, որ աղքատ ըլլալով չէր կրցած բժիշկներու դիմում ընել և դարմանել տալ՝ իր որդւոյն սա

խեղճ վիճակին մէջ հաստատուիլը տեսնելով, սուրբերու բարեխօսութեան դիմել ուրոշեց և նոյն տարւոյ Ապրիլ 5ին, Ղալաթիոյ Դոմինիկեան Հարց եկեղեցւոյն մէջ Ս. Վինչէնցիոս Ֆէրրէրեանի տօնին առթիւ մեծ տօնախմբութիւն կատարուիլը լսելով, իր զաւակը բեռնակրի մը շալկել տալով, յիշեալ եկեղեցւոյն այցելութեան տարաւ, որպէս զի այն սքանչելագործ սուրբին մասունքը համբուրէ ու բաղձացած բժշկութիւնը ստանայ։ Բայց արդիւնք մը չունեցաւ. որովհետեւ Աստուած այն շնորհքը ի պատիւ Տեսնելու Կոմիտասայ վկային վերապահած էր։ Ուստի մայրը հետեւեալ օրը իր ազգականներէն Փիլիպպոս Ճամֆին ձեռք Երանելւոյն չիրիմը տարաւ Յարութիւնը։ Հոն բարեպաշտութեամբ ու հաւատքով պահ մը աղօթելէ ետքը, Յարութիւնի մէկ թեւէն ինք և միւս թեւէն Փիլիպպոսը բռնելով երեք անգամ դերեզմանին բոլորտիքը շրջան ընել տուին։ Երրորդ շրջանին Յարութիւն իւր մէջքէն դէպի վար սրունքներուն վրայ ոյժ մը իջնալ զգաց. ինքնիրեն չտկուեցաւ և կրցաւ ոտքերուն վրայ ամուր կոխել ու քալել։ Եւ իրօք ալ, առանց մէկու մը օգնութեան քալելով տուն վերադարձաւ՝ ամբողջովին բժշկուած։

(Շարունակելի)

ԹՈՒՂՅ ՀՈՎՈՒԱԿԱՆ (*)

(Շար. եւ վերջ)

Հաքին շուրասընը էյի պիլմիշ օլալմ քի, Ալլահըն վէ ճէմաաթըն հուզուրընտա պիլգիմ իւք վաղիֆէմիլ հիւանի իպրէթ վէրմէք տիր. չիւնքի Յիսուս էվվէլ իճրա իտէր վէ սօնրա տա էօյրէտիր իտի. է'յ Ալլահըն քահանաւարը վէ Բիլիսանըն խատէմէսի, պիլ քեսաֆֆէթէն ազիլ վէ շայանը թէմսիլ պիր էօմիւր իլէ, ճէնապը Հազգտան իւհտէմիլգէ թէվտի օլունմուշ օլան ճանլարա սահիէ չօպանլար

(*) Տես թիւ 88, էջ 195.

վէ ֆէտաքեար Առաքեալար օլմաղա պօրճ-
լուլըզ, էյեր թալիմաթլարըմըզ, հիւսնի իպ-
րէթ վէ լէքէսիզ պիր սիյրէթ թուզըյա
թէլզիզ իտիլմիշ օլմաղսա, եալընըզ էօյրէթ-
մէք ֆայիտէլի օլմաղտան զիյատէ միւսթէ-
հազըըը բէտտ տիր: Սըֆաթըը բուհանիյէմիզ
վազիֆէլէրինին շայանը հայրէթ պիր սու-
րէթլէ վէ քէմալը թալազաթ իլէ թարիֆ էյ-
լէյէն, ծնունճը Պիոս Բաբա հազըրէթլէրինին
զաթօլիք սընֆը բուհալանընա խիթապէն
եազմըշ օլտուղու 1908 Օգոստոս 4 խարիխլի
թահրիրաթըը բէտէրանէլէրի չօզ տէֆա
միւթալէա էյլէմէլէրինի միւհիթէրէմ կղերի-
միզէ էքիտէն թալսիյէյի վազիֆէտէն ատտ
իտէրիզ:

Արթըզ խիւլասա իտէլիմ: Պօղոս Առա-
քեալըն, քէնտի թարաֆընտան Եպիսկոպոս
ձեռնադրել օլունմուշ օլան սէվկիլի շակիրտի
Ս. Տիմոթէոսա խիթապ էյլէտիյի տալէթի,
աշի բուհնիւվալ քէլամլարլա պիզտէ սիզէ
խիթապ իտէրիզ «Չալըշ քի Ալլահըն հուզու-
ընտա նէֆաինի մազպուլ վէ միւթէպէր
պուլունտուրասըն. ութանաճազ հիշ պիր
հալի օլմայան պիր ֆաիլ օլասըն, հազիզաթ
քէլամընը տօղրու թէլիսիա էյլէլէսին» (Բ.
Տիմ. Բ. 15): «Վէ սէն քէլամը վազ էյլէ,
վազըթըը վազըթսըզ եթիշ, քէմալը միւ-
սապէրէթ վէ թալիմաթ իլէ թէքտիր էյլէ,
թազիր էյլէ, թէսէլի էյլէ. չիւնքի վազըթ
կէլէճէք քի թալիմաթըն հազիզաթընը տին-
լէմէյէճէքտիրէր. իլլա քէնտի արզուլարընա
կէօրէ քէնտիլէրէ մուալլիմլէր չօղալթաճաք-
տըրլար, գուլազլարընը հազիզաթտան չէվի-
րիպ էպաթըլ իլինտէ խարապ օլաճազլար:
Ֆազաթ սէն ֆէրահ օլ, հէր Նէյտէ չալըշ,
պիր Աւետարանիչին եարաճաղը շէյլէրի եաբ,
վազիֆէնի թէքմիլ թուլթ» (Բ. Տիմ. Դ. 2):

էյեր շու հայրապետական կոնդակըմըզը,
իքի սէնէտէն պէրի Աւազ թեմիմիզին միւս-

թէլիֆ իպատէթխանէլէրինտէ տինտարանըն
վէ էճանիպին գարշաընտա թարիֆի ղալըը
գապիլ պիր ճիւրաթլա եաբըլան աղըր վէ
չէքլէնտիրիճի աշվալտէն պահա իթմէքսիզլին
պիթիլէճէք օլսայտըզ, հազիզաթէն Չօպան-
լըզ վազիֆէմիզտէ աղըր սուրէթտէ գու-
սուրըը պուլունաճազտըզ: Պու սըբապիզծ
վազաանըն ինտ Ուլլահ նէ գատար աղըր
պիր գապահաթ օլտուղընը պիլմէյէն պախու-
սուս հէզարան թէլէսիլֆլէր իտէրէք նէֆրէթ
տուլաճազ գատար իքրահ էյլէմէյէն քիմսէ
եօզտըր: Իմտի քիլիսալարտա վազը օլան պու-
մէնֆուր վէ մէզմուլ սըբապիզծուլիւլար ի-
չիւն, Ալլահըն հուզուընտա պիր մուգա-
պէլէ վէ պիր թէլաֆիի քէֆարէթ օլմազ
իւզրէ տինտար ճէմաաթընըզա, պու նի-
յէթէ, միւսթին օլտուղը մէրթէպէտէ, պիր
սատապա վէրէրէք, պիր խայր ամէլտէ պու-
լունարազ, եախօտ պիր կիւն խասսէթէն Ս.
Հազորգուլիւնա եազլաշարազ, եա պիր պա-
տարազ կէօրէրէք, եախօտ Մեծ Պահք կիւն-
լէրինտէ թազտիմ օլունան ապալխարու-
լիւն տուալարընը պու նիյէթէ սունարազ,
նիհայէթ միւնասիպ պիր թարզլա պու քէ-
ֆարէթ վազիֆէսինի իճրա էյլէմէլէրինի է-
հէմիլյէթլէ թալսիյէ իտինիզ քի, ճէնապը
րահման, Յիսուս Իրիստոսըն Սէվապլարը
հիւրմէթինէ օլարազ, զէլալէթտէ պուլունան
օ զէվալլըլարա մէրհամէթէն սահիհ թէօվպէ
ինսան էյլէսին: Պու խուսուսը ճիւմէմիզ տէ
արզու իտէրիզ, զաթէն պու նիյէթէ պիզտէ
խասսէթէն տուս իթմէքտէն կէրի գալմա-
մըշըզ վէ եինէ տէ գալմալաճաղըզ

Իշթէ պու արզուլարլա միւթէհասսէս օ-
լարազ սիզէ վէ ճիւմէ տինտար ճէմաաթը-
մըզա հայաթը մուգատտէտէ վէ սատտէթի
էպէտիյէ թէմէնի իտէր վէ ան սամիմ իւլ
գալպ Բէտէրին, էվլատըն վէ Ազիզ Բուհըն
խամինէ թէպէրրիւքեաթըմըզը ինսան էյլէրիզ:

Պատրիարքըմըզըն իւլիւննիւ սէնէսի, 1913 Յունվարըն 20իննի կիւնիւ

Պէյօղլու Կաթողիկոսարանըմըզսան վէրիլմիս սիր:

(Իմզա) ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.

Կ. ՊԱՏՐԻԱՐԻՍ ՏԱՆՆԵ ԿԻՆԻԿԻՈՅ

ԳԵՈՐԳ Ի. Վ ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻԻԱՆԱՊԵՏ

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Ապրիլ 13	† Կիր. գկ. Կարմիր Կիրակի
14	Բշ. դժ. ԻԳ. օր Յիկնաց
15	Դշ. դկ. ԻԴ. »
16	Դշ. աժ. ԻԵ. »
17	Եշ. ալ. ԻԶ. »
18	Ուրբ. քժ. ԻԷ. »
19	Շք. քկ. ԻԸ. »

Ս. ՎԻՆԿԵՆՏԻՈՍ ՖԵՐՐԵՐԵԱՆ

(Շար.)

Հասարակօրէն իր քարոզները կը յօրինէր խաչելութեան առջեւ, որմէ կ'առնուէր լոյսն ու կրակը՝ իր ունկնդիրներուն սիրտը շարժելու համար: Եւ քարոզէն վերջն ալ, նորէն կ'իյնար խաչելութեան սուքը, Աստուծոյ նուիրելու իր քարոզութեան յաջողութիւնը և նորոգելու համար իր առաջադրութիւնները թէ՛ ուրիշներուն սորվեցուցածը գործադրելու մէջ ինքն առաջինն հանդիսանայ:

Սատանան, նախատեսելով անոր ընկիւք բոլոր բարեքները, սոսկալի կերպով յարձակումներ քրաւ անոր դէմ: Օր մը, այնպէս քրաւ որ Սուրբը կարծեց ձայն մը լսել Սրբոյ Կրակին Մարիամու պատկերէն որ կ'ըսէր իրեն թէ պիտի չկարենայ պահել իր կուսութիւնը: Վիկենտիոս ջերմեռանդութեամբ և արցունքով թախանձեց Մարիամու օրհնութիւնը, որ եւրեւելով միմիայն զինքը:

Մեր Սուրբը մեծապէս զշտանալով այն հեռուածին վրայ որ երկուքի կը բաժնէր եկեղեցին հակապայքերու ժամանակ, ամէն ճիգ թափեց որպէս զի Բենեդիկտոս ԺԳ. զայն վերջացնէ: Սակայն գեղեցիկ խոստումներ միայն կրցաւ ձեռք բերել, որոնք այլեւայլ պատրուակներով բնաւ չիրագործուեցան՝ առաջարտաւանութեան միայն: Ի՛նչ Բենեդիկտոս ԺԳ. և ո՛չ իր մրցակից հակառակորդները հաւանեցան հրաժարիլ, ի սէր Եկեղեցւոյ միութեան, այնպիսի պաշտօնէ մը որ երկուքի երեքի բաժնուած, կտոր կտոր եղած, յափշտակուած, կարծես անիշխանութիւն ու անհամաձայնութիւն կը տածէր Քրիստոսի խորհրդական մարմնոյն մէջ: Վիկենտիոս գոնէ իր օրինակներով ու քարոզներով բարեկարգեց Ավինիօն քաղաքը:

Այսու ամենայնիւ եկեղեցւոյ աղէտները բժշկելու համար տառնութիւն ամիս աշխատելով ու տեսնելով որ ընդունայն են իր ճիգերը, այնքան բուռն ու սաստիկ տենդէ մը բռնուեցաւ որ քանի մը օրուան

մէջ մահուան դռները մօտեցաւ: Երբ այլեւս ամէնքը յայտնին կարած էին անոր կեանքէն, Տէրն մեր Յիսուս Քրիստոս երեւցաւ անոր Ս. Գոմինիկոսի ու Ս. Ֆրանչիսկոսի հետ, և վստահացնելով որ մօտ ժամանակէն պիտի վերստանար Ս. Եկեղեցին իւր խաղաղութիւնը, հրամայեց անոր որ Բենեդիկտոսի պալատը թողու և աղքատ ու խոնարհ վիճակի մէջ երթայ Ս. Աւետարանը քարոզելու Գաղղիոյ և Սպանիոյ ամէն գաւառներուն մէջ: Սուրբը անմիջապէս զգաց որ բժշկուած էր: Բենեդիկտոս ի զուր ջանաց զինքը իր քով պահելու: բայց տեսնելով որ անկարելի է, ամէն տեսակ իրաւասութեամբ ճոխացուց զինքը՝ իբրեւ անաքելական նուիրակ մը:

Այսպէսով նա կարճ ժամանակի մը մէջ շրջեցաւ Եւրոպիոյ մէկ մեծ մասին մէջ, քարոզելով ի Գաթալոնիա, Բրովէնցա, Սալոյա, Ճենովա, Իրլանտա և ամբողջ Սպանիա, և վերջապէս Իտալիոյ և Գաղղիոյ միւս քաղաքներուն մէջ, մինչեւ ի ստորին Պրըմաներ, ուր և վախճանեցաւ, ինչպէս պիտի պատմենք քիչ յետոյ. իր առաքնութեանց վրայ համառօտ տեղեկութիւն մը աւանդելէ վերջը:

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գրք. Ա.—Գլ. Է.— Սնոսի յուսոյ եւ սնոփառութեան վրայ:

Սնոսի է ով որ իր յոյսը կը դնէ մարդոց կամ արարածոց վրայ:

Մի՛ ամչեաւ Յիսուսի Քրիստոսի սիրոյն համար ուրիշներու ծառայելիւն, ու այս աշխարհի վրայ աղփաս երեւնալիւն:

Դու քու անմիջ վրայ մի՛ ապաւինիր, այլ Աստուծոյ վրայ հաստատե՛ քու յոյսը:

Ըրե՛ ինչ որ կրնաս, եւ Աստուծոյ պիտի օգնէ քու քաղի կամփոյ:

Մի՛ վստահիր քու գիտութեանդ կամ որ եւ իցի մարդու հնարագիտութեանդ վրայ, այլ յաւիտ Աստուծոյ շնորհաց, որ կ'օգնէ խնամահներու եւ յսնոմապասանները կը խնամահեցնէ:

“ՔՈՅՐ ԵԿԵՂԵՑԻ”ՆԵՐՈՒ ՔՈՅՐՈՒԹԵԱՆ ՏԻՊԱՐ ՆՄՈՅՇ ՄԸ

(Շար. եւ վերջ)

Վերջերս դարձեալ Յոյն Եկեղեցին պաշտօնական տեղ մը և պաշտօնապէս յայտարարեց իր գաղափարը նկատմամբ Հայ-Էջմիածնական Եկեղեցիին:

Կեսարիոյ մէջ, այս օրերս, կը վախճանի յոյն երեւելիներէն Ալքրամ անուն անձ մը: Ասոր ընտանիքը կը բաղձայ որ Հայ-Էջմիածնականաց առաջնորդն ու կղերը ներկայ զըսնուին թաղման արարողութեան, և էջմիածնական երեք եկեղեցիներու զանգակներն ալ զարնուին. ասոր համար որոշ գումար մը ալ կը տրամադրէ: Հայ-Էջմ. Առաջնորդը Դեր. Խոսրով Մ. Վ. Պէհրիկեան չի մերժեր իրեն եղած առաջարկը ինչպէս նաև տրամադրուած գումարը... Թաղման օրը մինչ Հ. է. երեք եկեղեցիներու զանգակները կը հընչեն տխրօրէն, Առաջնորդը դպիրներով, զըպրապետներով, Տէրաւորներով և ազգին երեւելիներով, շապիկներ, շուրջառներ, խաչ ու գաւազաններ միասին առնելով կը փոխադրուի ննջեցեալին բնակարանը, ուր քիչ վերջը կը հասնի նաև Յոյն Մետրապօլիտը, և ցուրտ ողջոյն մը միայն կուտայ Հայ-Քոյր-Եկեղեցիին որ այնքան ոգեւորութեամբ փոխադրուած էր Յոյն-Քոյր Եկեղեցիի վախճանեալ մէկ անգամին բնակարանը...

Մետրապօլիտն ու յոյն կղերը կը սկսին զգեստաւորիլ. Հայ-Քոյր-Եկեղեցիին զպիրներն արդէն շատոնց հագած են շապիկներն, Տէրաւորներէն ոմանք ալ առած են շուրջառնէն և այլք ինչպէս նաև Առաջնորդը ըզգեստաւորուելու վրայ են. և ահա՛ անդիէն Մետրապօլիտը դէպ ի Հ. էջմ. Առաջնորդը յառաջանալով խրոխտ ու կտրուկ շէշտով կը ձայնէ. Մեքիսասա՛ եֆեֆիսի. կ'արգելում ձեզ այդպէս եկեղեցական զգեստներով եւ երգեցողութեամբ ընկերանալ արարողութեանց. եթէ կը փափաքիք, հետեւելու եֆ մեզի առանց եկեղեցական զգեստի: Ձեռք ԿՐՆԱՐ ՁԵՐ ՀԵՏԸ ՀԱՂՈՐԴԱԿՅԻԼ Ի ՀՈԳԵՒՈՐՍ. այս եմեր Պատրիարքարանի յատուկ հրամանն ու հրահանգը: Սարսափելի եւ անակնկալ պատգամ... որ ամէնքը կը ստոգնէ, զըտնուած տեղերին կը գամէ: Այսպիսի պաշտօնական արհամարհանքի մը հանդէպ ինչ կ'ընեն Հայ էջմ. Եկեղեցւոյն ներկայացուցիչները. — ափ ի բերան եղած՝ շապիկներն ու շուրջառներն կը հանեն կը ծալեն... միևնույն ժամանակ կը հետեւին մինչև եկե-

ղեցի, ու առանց սպասելու արարողութեանց վերջանալուն, անկէ կը մեկնին խորապէս վշտացած իրենց Յոյն-Քոյր-Եկեղեցիին կողմէ կրած դառն ու անակնկալ անարգանքէն: — Բայց քիչ վերջը հայ եկեղեցին դարձեալ քոյր կ'ըլլայ յոյն եկեղեցւոյ և կը մոռնայ անոր իրեն ըրած այս ամենամեծ նախադէմքը, շընորհիւ իր ազատամտութեան, անխտրապետութեան, հանդուրժողութեան և իրեն միւս առանձնայատուկ ձիրքերուն, որոնց տեղ եթէ ունենար քիչ մը աւելի կրօնական սկզբունք, եկեղեցիի նշանակութեան դիտակցութիւն, անտարակոյս իր արժանապատուութիւնը, ազգային պատիւը փրկած պիտի ըլլար այսպիսի ցաւալի նուաստացումներէ:

Մենք այս դէպքերը ցաւով կ'արձանագրենք հոս եւ միակ նպատակ ունինք մեր հայ եղբայրները աւելի գիտակից տեսնել իրենց արժանապատուութեան. զմեզ հարուածած ժամանակներն իսկ մենք կ'ուզենք զիրենք փրկուած անտեղ աշխոյշ հարուածներէն: Արդեօք վերջապէս պիտի ըմբռնեն մեր միտքը. պիտի ուղղուին. պիտի օգտուին իրենց դառն փորձերէն... յուսանք, եթէ արդէն ուշ չէ:

Կեսարիա

ՏԵՐՈՒՆԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՐԿ ՄԸ
Բ. ԹԱԳՈՒՅԻ ՃԵՆՏԵՐԷՃԵԱՆԻ ՎՐԱՅ
Ա. ՅՂԻԹԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԷՆ ՄԻՆ

Քոյր Թագուհի Ճէնտէրէճեան ծնած է յԱնկիւրիա 1810ին կամ ըստ ոմանց 1813 ի. Մատաղ հասակին մէջ մօրմէն որբ մնալով, իր հօրաքոյրը, Հռիփսիմէ մայրապետ, կը ստանձնէ զինք մեծցնելու և դաստիարակելու հօգը: Հռիփսիմէ մայրապետ իր շուրջը հաւաքած էր բազմաթիւ աղջիկներ որոնց քրիստոնէական վարդապետութեան և հայ ընթերցողութեան դասեր կ'աւանդէր: Բարեպաշտ մայրապետը, այն բնուիւթեամբ որ Աստուած սովոր է տալ ընտիր հոգիներու, իրեն

մասնաւոր ուշադրութեան առարկայ կ'ընէ պզտիկ որբուհին մտաւորական և ֆիզիքական զարգացումը, նշմարելով անոր վրայ ընական և գերբնական գեղեցիկ ձերքեր: Իր հմտութեան չափաւոր պաշարը սպառած էր իր ուշիմ սանուհին, կը գիմէ Պահատուրեան վարդապետի որ սիրայօժար յանձն կ'առնու շարունակելու դաստիարակութեան գործը. և ողջամիտ բարեպաշտութեան հետ կ'աւանդէ հայ. գրաքարի դասեր: Ուսուցչութեան տաժանքը ժամանակէն առաջ խանգարեր էր Հռիփսիմէ մայրապետի առողջութիւնը. այս պարագան կը ստիպէ զինքը այս պաշտօնը յանձնել աւելի ճարտար ձեռքերու, իր եղբորդասեր, որ արդէն կը մատնանշուէր իրբեւ նորատի, և սրբակեաց գիտուն մայրապետ մը բոլոր Անկիւրիոյ մէջ:

Մանկամարդ վարժուհին հօրաքրոջը հրակողութեան ներքեւ շուրջ տասնեակ մը տարիներ կը շարունակէ ուսուցչութեան պաշտօնը, աչքը և միտքը սեւեռած սակայն այն երջանիկ ժամուն ուր նախախնամութիւնը պիտի կատարէր իր սրտին մեծագոյն տենչը, այն է փակուիլ վանքի մը մէջ և հոն նուիրել զինքը Աստուծոյ և բնկերին:

Այս միջոցիս 1843ի ոկիզբները, Հասունեան Անտոն Գերապայժառ, մեր երջանկայիշատակ Հիմնադիրը, գաղափար յղացած էր կուսանաց Միաբանութիւն մը կազմելու, որուն յանձնէր իգական սեռին դաստիարակութիւնը: Արդէն երեք կորովի հոգիներ եկած նուիրած էին իրենց բարի կամքը, բայց Հասունեան Գերապայժառ նախախնամութենէն կը սպասէր ուրիշ նշանի մը, ուրիշ մղման մը, հիմնարկելի չէնքին չորրորդ անկեան քարը դեռ բացակայ էր, այն չորրորդ անկեան քարը՝ որ կը կոխուէր և կը յղկուէր զանազան հարուածներով Անկիւրիոյ բեղուն երկրին վրայ: Եւ որչափ մեծ կ'ըլլայ իր գոհունակութիւնը երբ նամակ մը կ'ընդունի Անկիւրիոյ թեմին վիճակաւոր յայտնաւոր Առաջնորդէն, որ կը նկարագրէր իրեն թագուհի մայրապետի բարեպաշտութիւնը, հազուագիւտ ձիրքերը և փափաքը իր հիմնարկելիք Միաբանութիւնը մտնելու: Առաջ-

նորդը կ'աւելցնէր նաև թէ թէպէտ Անկիւրիոյ թեմին համար մեծ զրկանք մը պիտի ըլլար Թագուհի մայրապետին մեկնիլը. սակայն կարելի չէր ա'լ եւս դիմադրել անոր թափանձանաց: Հասուն Գերապայժառ կը տեսնէ նախախնամութեան մատը այս խոնգրանքին մէջ և չի վարանիր ընդունիլ իր ապագայ գործին այս ամենակարեւոր տարրը:

Թագուհի մայրապետ հրաժեշտի ողջոյնը կուտայ իր սիրատուն սանուհիներուն, իր ծնողացը դամբաններուն և արտասուք իր հօրաքրոջ դեռ թաց գերեզմանին. կը հասնի Պոլիս, կաթողին կ'ողջագուրուի իր երեք ընկերներէն որ կը սպասէին իրեն անձկակարօտ՝ հոգեւոր պատերազմի դաշտին վրայ:

Անարատ Յղութեան Միաբանութեան չորս հիմերը գտած էին զիրար. քառաձայն ներդաշնակութիւն մը կը կազմէին անոնք հաստատուն և անուշ խաղերով: Հասունեան Գերապայժառ հասած էր նպատակին, և 1847 ի Դեկտ. 9 ին ուխտել կու տայ անոնց առաջին անգամ Միաբանութեան ուխտերը: Երկնից թագուհւոյն զրօշին ներքեւ, չորս կոյսերը խանդավառ եռանդով կը նետուին գործնական անձուրացութեան կրկնք: Իւրաքանչիւրը իր տեսակին մէջ մեծ և օրինակելի, կոշուած զանազան պաշտօններով նորածին հաստատութիւնը յառաջ մղելու, ըմբռնած թէ ինչ քանակութեամբ զբոհուութիւն պէտք է անոր հիմերը անխախտելի ընելու, արիական հոգեով կը սկսին սուրբ պատերազմը: Իրարու ձեռքէ կը յափշտակեն պայքարին տաժանելի մասերը, իրարու կը յատկացնեն անոր յաջողութիւնները: Մենք ապագային թողլով սակայն ցոյց տալ այդ կուսական ջինջ գէմքերը Հայ-Կաթողիկէ Եկեղեցւոյն հորիզոնին վրայ, շարունակենք մեր հարեւանցի ակնարկը անոր վրայ որ երէկ մեկնեցաւ մեզմէ թողլով զմեզ իր առաքինութեանց անուշահոտութեամբ զմայլած:

Գործունեայ կենաց ասպարէզին վրայ, Բոյր Թագուհիի յատկանիշը եղած է դաստիարակութիւնը: Երկայն տարիներ մինչեւ 1880, Պոլիս, Մարզուան, Տրապիզոն անոնց կուս և անխոնջ պարասած է այդ գործին:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՍԱԻԱՌՆԱԿԸ (*)

(Շար.)

Ազգին ամէն խաւերու աղջիկները վայելեցին անոր հեղահամայն հանդարտութիւնը, ամէն փորձի և դժուարութեան տոկացող յարատեւութիւնը, անսպառ դուրգութեան քաղաքի իր յաջողութեան: Բնական պարգեւներու անժառանգները մանաւանդ վայելեցին անվհատ համբերութիւնը և մայրենի գորովը, որով կուտար ինքզինք ամէնուն, իւրաքանչիւրին ինկած արդար բաժինովը: Իր կենդանի ասնուհիները բարձրագոյն կը հռչակէին ասոնք: Զշմարիտ դաստիարակի համար պահանջուած այս հոգեկան բարեմասնութեանց վրայ Աստուած աւելցուցած էր նաեւ ֆիզիքականները. քաղցրալեզու, յանկուցիչ, քաջակազմ մշակ մը ուսուցչական ասպարէզին վրայ. սիրող կարգի և կանոնի. մինչև իր մահը մեթոտիկ բարեկարգութիւնը տիրեց իր շուրջը, իր գործածութեան յանձնուած ամէն առարկայի վրայ: Մաքուր արտասանութեամբ և մեծ զիւրութեամբ կը կարդար և կը խօսէր հայերէնը: Տեսանք արդէն թէ այս գործին ընտելացած էր ան իր հօրաքրոջը և Պահատուրեան Վարդապետի աշակերտը և իմաստուն հսկողութեան տակ: Այսու հանդերձ յարատեւ ճիգ մը ունէր ինքզինք զարգացնելու. դեռ վերջին ժամանակները, տարիներու բոլոր ուսոցը վրայ, — ոչ սրտին և մտքին—Աւետարանը ձեռքը՝ մեղի կը դնէր, դարձուածքի մը բացատրութիւնը կամ բառի մը նշանակութիւնը հարցնելու: Միշտ շահագրգռեցաւ այն ամէն խնդիրներով որ ուղղափառ դաստիարակութեան գործին հետ առնչութիւն կրնային ունենալ: Ստէպ կը հարցնէր աշակերտուհեաց թիւը, գաւառաց վարժարաններու վիճակը. անոնց բարի լուրերը իրեն համար հրճուանաց և մխիթարութեան աղբիւր էին: Կոչմամբ և ձիրքերով այս դաստիարակը, միշտ դաստիարակ մնաց հոգեով երբ իր առանձնական կեանքին մէջ, սենեակին անկիւնը քաշուած կ'աշխատէր և կ'աղօթէր անոնց համար որ կը շարունակէին այս դժուարին գործը:

(Շարունակելի)

Ջանացուեցաւ հնարելու նաեւ այնպիսի սաւառնակներ որ կարենան իջնել կենալ ջուրի վրայ, և ապա իրենց սեփական միջոցներով վեր ելլել: Ասոր համար միջման հանդէս մը կազմակերպուեցաւ Մօնաքոյի մէջ, ուր ճարտար արուեստասէրներ մեծ եռանդով ցոյց տուին իրենց պիւտերը, և Շրմէ Ջրասաւառնակով (hydrac-aéroplane) գնաց իջաւ Սէն գետին վրայ, Մեծ-Պալատին մօտ, օդագնացութեան ցուցահանդէսի պահուն. սակայն այս արիական շահատակութեան համար ամբաստանուեցաւ իրրեւ յանցաւոր, և դատարան կանչուեցաւ, ուր գնաց դարձեալ սաւառնակով և իջաւ Սէն գետին վրայ քաղաքակզղիին մօտիկ:

Սաւառնակի արկածները երբեմն յառաջ կու գան շարժակէն. այս պարագային՝ ճարտար ուղղորդը (pilote) անմիջապէս կը մարէ լուցանքը (allumage) և կ'իջնէ թեւատարած թռիչքով. բայց չի կրնար այնուհետեւ ուղած տեղը առգետնիլ և կ'իյնայ վերջապէս առջեւի կամ ետեւի կողմի վրայ՝ ճամբու, մարզի ցանկապատի, կամ նոյն իսկ, Վէտրինի պէս, հեռագրական թելերու մէջ: Արկածներու շատին պատճառն է միահարթակի մը (monoplan) մէկ կամ երկու թեւին ծախը, որ յառաջ կու գայ վայրէջքի ստեղծելու վարէն դէպի վեր ճնշումին յարաճուն ուժգնութենէն: Միջոցորտի վերին բարձունքներէն վար իջնող սաւառնորդներուն վայրկեանապէս օդի նրբագոյն խաւերէն խտագոյն խաւերը անցնելէն կրնայ հետեւիլ րոպէական շլացում մը և մահաբեր անկում մը. այս պատճառին կը վերագրուի Լէօ Շաւլէի արկածը որ Ալպեան լեռներուն վրայէն անցնելէ վերջ՝ արագօրէն իջնելու տառն ինկաւ մեռաւ. իր հայրենակիցը, Պիլլովուչի, վերջերս նոյն օդանոցը կատարեց առանց ար-

(*) Տես թիւ 88, էջ 197.

կածի։ Սաւառնորդները շատ անգամ նշաւակ կ'ըլլան նաեւ բռնութեան հովերու եւ յորձանքներու ու անակնկալ կերպով վրանին կը հասնին։ Երբեմն խաղաղ օդով ուժգին ցնցումներու կ'ենթարկուին, թէեւ առհասարակ մերիկի մը մօտերը, սակայն մերթ եւս անսամպ եւ ջինջ երկինքի մէջ։ Օրինակի համար, երաշտ դաշտի մը մակերեսը արեւուն ջերմութիւնը անդրադարձնելով վերելակ (ascendant) հոսանք մը կը ծնանի իր վերելքը, մինչդեռ մօտակայ անտառը՝ իր զովութեամբը՝ վայրիջակ (descendant) հոսանք մը յառաջ կը բերէ։ Երբ կազմածը ինչայ բաւական արագընթաց վայրիջակ հոսանքի մը մէջ, նոյնին վայրամուղ ուժին՝ թեւերուն վրայ ըրած ներգործութեամբը, կը սկսի մէկէն ի մէկ աւելի արագ վար իջնել, եւ սաւառնորդին կը թուի թէ կազմածը խոյս կու տայ ոտքին տակէն։ Շատ օդագնացներ կը մեռնին առանց յայտնել կարենալու իրենց արկածին պատճառը։ Մ. Ասթլէյ հարիւրաւոր մէջը բարձրութենէ վար ինչալէ վերջ ապրեցաւ եւ պատմեց իր անկումին պատճառը։ Իր կրօնիկը տախտակի մը վրայ գտնուած հանգոյցէ մը կը բռնուի։ Հակառակ ամէն ջանքի չի յաջողիր զայն հանել, եւ զրկուելով ազատ շարժումէ, իր կազմածին հաւասարակշռութիւնը հաստատ պահելու անկարողութեան մէջ կ'իյնայ։ Ահա՛ այսօրինակ ոչինչ պատճառ մը բաւական է մահառիթ արկածներ յառաջ բերելու։

(Շարունակելի)

ՊԱՏՐԻԱՐԲ ՎԷ ԲԱՅՐԻԳ ՔԵԼԻՄԵԼԵՐԻ (*)

Թ. Էֆ. Նիկողոսեան «Մէճմուա» նըն 5068 նիւմէրօլը նիւսխէսինտէ, Արհի. Արփիարեան Արքեպիսկոպոսա խիթալէն հազարաթը շախմայէ իլէ տօլու օլան պիր մէքթուպ հազմը օլուպ, պու մէթթուպընտա պիր չօք տէֆա միւմայիլէյի ճահիլ, աֆիլ

(*) Այլեւայլ անձերէ գիծում եղած ըլլալով որ այս յօդուածը տաճկերէն թարգմանութեամբ ծանօթացուի նաեւ թրքախօսներու, ներկայիս իրենց փափաքը կը լրացնենք։

օլունմազ ճեհալէք սահիպի, պիլմեք իսքեմէյին, աճեքի, պեճեքիսիզ, քիլիմէիլէ օլնայան, հազիգաքը քաղեիր իսէն վէ սայիրէ թէսմիյէ իթմիշտիր։

«Շէրէֆ, միւշէրրիֆտէ տիր» մէալընտաքի տարպը մէսէլ հէր քէսճէ մալիւմ տիր։ Սահիպի շէրէֆ պիր քիմսէյէ խիթալ օլունան հազարաթը շախմայէ, նէֆսի էմմարէնին պիր թէզահիւրիւ վէ թահգիր իտէնին հաիզ օլուղը դատըն էօլլիսիւ տիր։

Սահիպի մէգալէ, Արփ. Արքեպիսկոպոսըն քէնտի քարոզընտա Ամեն. Թէրզեան Կաթողիկոսը Ս. Պատարագտա Բաքրիզ սըֆաթըլա տէյիլ, իլլա Պասրիարք սըֆաթըլա եանի Միլլէթ պաշը մանասընտա տէյիլ, Րէյիսի Րուհանի մանասընտա զիքը իթտիլիմիզ եօլունտաքի իյզահաթընը ճահիլանէ, նազըս վէ եանըշ պուլույօր։ Վէ պունա գարշը տա իքի իթիրազ տէրմիյան էյլէյօր, 1. Ս. Պատարագ էմնասընտա սիյասի հիւքիւմտարլար տա զիքը օլունուրլար։ 2. Վազթըլա պարզ Բահանայ բաքրիլիւ տախի զիքը իտիլիլէրտի։— Սօնրա, պու կիպի քէլիմէլէրին մանասընըն իյզահ վէ թահին օլունմասընը արղու վէ Կ. Արձագանզըն շիմալիյէ գատար մանթըգի վէ թարիխի պիր պէնտ վէրմէքտէն չէքինմիշ օլմասընը մուախազա էյլէյօր։

Փագաթ կէօրիւնիւյօր քի, սահիպի մէգալէ զաղէթալարը տիգպաթլա միւթալէա իթմէքսիզին եալընըզ մուախազա վէ իթհամ էյլէիօր։ Կ. Արձագանզ՝ Պասրիարք քէլիմէսինին սուրէթը մութլագստա պաշ ըրիյասէթի Րուհանիլէլիք իշար էյլէյէն սըրֆ քիլիսանըն գուլլանտըղը մանատա խիթիմալ օլունան պիր քէլիմէ օլուղընըն չօք տէֆա սէօլլէմիշ տիր։ Տիկէրլէրինտէն արֆը նազար օլունարազ (Բ. տարի, թիւ 39, էջ 163) մուխլիս իմզասըլա պիր աշխարհական թարաֆընտան պու մէսէլէյէ տալիր օլտուգճա մուֆասալ հազըլմըշ օլան պէնտին պուրայ թէքրար տէրճի ֆայիտէտէն խալի օլմայաճագ տըր։ Հէր նէ գատար օ պէնտի եազան պիր աշխարհական իտէ տէ, պիլէնլէրէ միւրաճաթ իտէրէք ֆիքրինի թասհիհ էյ-

լէմիշ օլտուղընը պիզզաթ քէնտիսի իզրար խախօր: Նիկողոսեան էֆ. տախի աշխարհական օլտուղընտան, շուռտան պուռտան եանլը թէսիրաթա գարըլաճագ ետրտէ, պէլքի, տօղրուլը սէօլլէյէն պիր աշխարհականըն սէօլլէրինտէն միւսթէֆիտ օլապիլէճէքտիր: Մէղքիւր պէնտին պու մէսէլէյէ տայիր օլան ֆըզրասը իշթէ շու սոր:

Չիրա քիլիսա տրուինսէ հէր էյ իպասէթ, վէ պի-նաէն ալէն հէր էյ ռուհանիյէթ սիր. ռուհանիսէն սին-սար էհալիյի մահրում իթմէ՛ պօյիւք խաթա սր: Մա մաճիս պու հիւրաթ այնի վագրթսա ճէհալէթ սիր. զիրա Ռիւթայ. Կաթողիկոս էճ.նին իսմինի Չայնաւոթսա ճէպ-րէն զիհր իթսիւմէմէ՛ կիւնահսան պաշգա՛ պալա սիր. զիրա քիւ պասարագարսա զիհր իսիլմէյօ՛ր մր. պու գաթար նասան աւալէթ խիսթիյան զալպիսէն եագրօլ՛ մր: Պագրլար սա, զիհր իսիլիսիսէն, մասամ քի Բաթ-րիլիսէն իսգաթ իսիլիսի, օնուն իշին ՊԱՏՐԻԱՐԺ քէլի-մէսի գուլլանըլմամար սէյօլլար: Տօղրուլու սէօլլմէմէ իշին պէն սէ պու էճէնարսա իսիս, ժագաթ պիլէնլէրէ սօրսում, անլասրմ, գանաթ կէթիթսիմ քի, պու՝ տօղ-րու սէյիլ սիր: Չիրա ԲԱՏՐԻՊ քէլիմէսի հէր նէ գաթար Պատրիարք քէլիմէսիսէն պօզմա իսէ սէ, էհալէթի հագրիսի սրժ ճիսմանի պիր մէմուրիյէթ իյմա իստր վէ պու մէմուրիյէթ՝ ռէիսի ռուհանիյէ վերիյիր, վէ իթթ պու ռէիսի ռուհանի սրժաթըն իյմա իսէն քէլիմէ պատրիարք սր քի **հայրապետ** քէնէմէ օլունըր: Չա-թէն Բաթրիկ մէմուրիյէթինն ինսարնսան, եանի ժա-քիս Սուլթան Մէհմէմէսէն չօզ էվլէլ պու քէլիմէ վէ իյմա իթթիյի պու ռիստէթի ռուհանիյէ մէվնուս իսի. 1500 սէնէյի միւթէնավըզ սր քի պու պատրիարք քէլիմէսի քիլիսէսէ միւսթամլէ սիր: Երմէնի Գաթօլի-լէրէսէ իսէ, սահա միլլէթ այրլմագսան վէ քաթրիլիք ժէրմանը պիւսանը վերիլմէսէն չօզ էվլէլ Չմմառ Կա-թողիկոսարք Պատրիարք Տանն Կիլիկիոյ քէսմիյէ օլընըր վէ տօլլէ իսգա իստրլէր իսի: Պունըն սա սրրը շու սր քի, Բենեդիկտոս ԺԴ. պու իւնվանը ինսան էյ-լէթի. վէ պատրիարք քէլիմէսի քիլիսէ ռուհանի մա-նասրննա, Կաթողիկոս քէլիմէսիսէն չօզ պէօյիւք սիր. զիրա էսկի գէմանսա պիր Պատրիարքն հիւմիւ վէ իսարէսի քահրընսա վասի էյալէթլէր պուլունըր իսի. հալպու քի, Կաթողիկոս աննագ պիր էյալէթ իսա-րէսինն մէմուր իսի. չունի Բուքիւրէթսիլիսէնն հէնուզ խիսթանըլըզ տօմիւլէ օլան պիր էյալէթին ռէիսիսի Կաթողիկոս քէսմիյէ իթմէմէ աւէթի մագպուլ իսի. պա-զէն պիր Պատրիարքն քահրը իսարէսիսէն պուլունըն միւթէսսիս էյալէթլէրէսէ պիր իիի Կաթողիկոսըզ տախի պուլունըր իսի: Վէ մասամ քի Ս. Աթոռ սահա պէօյիւք օլան պու էյգապը Կաթողիկոսա վէրմիս, նի՛շին օ իսմ զիհր իսիլմէլէնէ: Վէ պու յիւսանկուրիւն մուսմէլէսի սրժ ռուհանի օլսրըր հալսէ, ճէմաթըն վէ ճիսմանիլէրին, հաթթա պասարագ եարան Բահանա-

լարն քէլիմէն պաղըր օլամագ, օնլար սա պիր քէլիմէ սէլիսիւրմէլէր, եօզսա խաթա էսէլլէր:

Պինաէն ալէյ, Պատրիարք քէլիմէսիսին ռուհան Բաթրիարխա քէլիմէսիստէն նագլ օլունմուշ պիր ռուհանի քէլիմէ օլտուղը, վէ Բաթարըզտան սօնրա, թէսէլիսիլիւ ռուհա-նիսին էն ալի մէրթէպէսինի հայիզ օլան Գա-ւառապէս եախօտ Հայրապետ մէսնէտինէ տէլալէթ իտէն պիր իւնվան պուլունտըր աշիքեար տըր: Պու քէլիմէ վէ պու մէսնէտ Բիլիսանըն իլք ասրլարընտա նէշէթ իթմիշ-տիր, վէ պաշլընագ պէշ Պատրիարք վար ըտը: 1. Բօմա Բաթար, քի Պատրիարքլարն Պա-տրիարք իւնվանըն հայիզ իտի. 2. Սթան-պօլ, 3. Երուսաղէմ, 4. Աթաքիա, վէ 5. Իս-քէնտէրիյէ Չօպանլարը: Վազթըլլա պաշգա Պատրիարքական Բիւրսիլէր տէ իտառ օլուն-մուշտըրլար վէ պիզզաթ հերետիկոսլար պի-լէ պու թէսէլիսիլի սրրայը մուհաֆազա իթ-միշտիրլէր: Հաթթա չիմտի պիլէ էջմիածին Կաթողիկոսըն Ֆէրմանը օլմատըրը հալտէ տէ քէնտի քէնտիսինէ Պատրիարք ամենայն Հայոց իսմինի վէրմէքտէ տիր:

Էրմէնի—Գաթօլիք Կաթողիկոսլարնա Պատրիարք իւնվանը, Գաթօլիք Բիլիսանը-նըն օն տէօրաիւննիւ Բենեդիկտոս Բաթար թարաֆընտան պիրիննի Կաթողիկոսըմըզ օլ-լան Աբրարամ Պետրոս Ա. ա վէ օնուն խա-լիֆէրիննէ ինսան օլունան վէ Կաթողիկոս-լուզտան քէք եիւքսէք պուլունան պու-նուլրապէսական թապիրէ պինաէն տիր: Չմմառ Էրմէնի Գաթօլիք Կաթողիկոսլարը-մըզ, հիւ Զեքմանլարը, Էախօտ Միլլէթ պա-շլըրըզլարը օլմատըրը հալտէ, օն սէքիլիննի ասրըն էվասէթինտէն պէրի պատրիարք իւն-վանընը թաշըրլար վէ « Պատրիարք Տանն Կի-լիկիոյ » սուրէթինտէ վազը իսգա էտէրլէր իտի: Իշթէ պու նուիրապետական սրժաթը ռուհանիյէսի սէպէպիլլէ տիր քի Ս. Պատա-րազ էսնասընտա Պատրիարք զիքը օլունուր: Պատարագամատոյց քիթապընտա տախի Ս. Բաթարան սօնկրա պու քէլիմէ հազըրմիշ-տըր՝ « Եւ զեքմանիկ Պատրիարքն մեր զՏէր Ա. Ա. . » . պուռտան սօնրա կէլիր՝ « զնախա-գանն մեր, կամ զԱրքեպ օն կամ զԵպսկ օն

մեր» եւլն : Եւրասը տա չայանը տիգգաթ
տըը քի Ս . Պատարագըն իշխնտէ Պաճրիաբ
սուրէթլէ զիբրի , 1823 տէ Վենետիկտէ թապ
օլուհան Պատարագամաոոյցտա միւնտէրիճ
տիր , եանի պիգիմ թէշքիլաթըմըզտան եեճի
սեճե մուգատտէմ , տահա Բաթրիգիմիզ վէ
Բաթրիգիքիմիզ օլմատըղը պիր սըրատա թապ
օլուհանուշ օլան պիր Վենետիկ քիթապը տա
միւտտէամըզը իսպալթ իտէյօր : Եու հալտէ ,
Պատարագ էննասընտաքի գիբը , Պաճրիաբ
քէշիմէսիլլէ օլնազ իպթիզա իտէր , վէ հիշ
պիր քահանայ եախօտ աշխարհական խա-
թարզ օյարազ պուհըր թէպտիլ իտէմէզ :

Հալ պուռ քի, Բաքրիզ քելիմէսի Բաքրի-
աւիսա քելիմէսինտէն զալաթ օլարագ ինտաս
օլունմուշ նէվիհաստ պիր քելիմէ տիր: Հէր
նէ գատար տա էսկի արարալարըն իսթիմալըն-
ճա Բաքրիզ քելիմէսի Րուհանի մանաստա
սարֆ խոլիլրտի իսէ տէ, Յաթիհ Սուլթան
Մուհամմէտ հազրէթլէթինտէն պէտէն, հիւ-
քիւմէթի Օսմանիյէնին Միլլիթ պաւը թա-
նըտողը ըէյիսի Րուհանի մանասընտա գու-
լանըլմագտատըր: Յագաթ, սատէ պիր քա-
հանանըն հախօտ պիր աշխարհականըն պիլէ
Միլլիթ պաւը օլանիլմէսի գապիլ պուլուն-
տուղընտան, Բաքրիք օլան տախիմ ըէյիսի
Րուհանի տէ օլմամըշտըր, ամմա պիլախէրէ
հիւքիւմաթը Օսմանիյէ Բաթրիզին աշին զէ-
մանտա ըէյիսի Րուհանի օլմամը շարթընը
թահիթը գարարա ալմըշտըր: Պինսէն ալէյհ,
հիւքիւմէթին նագարընտա Բաքրիզիլ տէ-
մէք, ապէն սուրէթը մէշրուտա թահին օ-
լունմուշ օլան պիր ըէյիսի Րուհանիյէ, էֆ-
րատը Օսմանիյէտէն պիր զըսմընըն իտարէյի
ճիսմանիյէսինի թէվաի էյլէմէք տէմէք տիր:
Շու հալտէ, Բաքրիզիլ սըրֆ պիր մէմուրի-
յէթի ճիսմանիյէտէն իսպարէթ տիր: Հէմգա-
թէն հիչ պիր հիւքիւմէթ, պա խուսուս աշին
մէգհէպտէն օլմայան պիր հիւքիւմէթ պիր
մէմուրիյէթի Րուհանիյէ վիքեմեզ, իլլա ժըր
քանըր: Տէմէք օլույօր քի, ըէյիսի Րուհա-
նիլի վագիֆէսի Բաքրիզիլ վագիֆէսինտէն
պիլքիւլիյէ միւսթագիլլ տիր, շէօյլէ քի
Պատրիարքըզ (Րուհանի պիր վագիֆէ օլ-
տուղը հասէպիլյէ) էսասի տիր: Բաթրիպիլ

խէէ, արիզի, ծնուն իշխւն տա, Բաթրիզլի-
յին լազվ օլունմասընըն, քէմաքեսն պազվ
գալան Պատրիարքըղա հիշ պիր գիյանը օ-
լամազ։ Մէսէլա, խիւրէն վազը օլտուղը
կիպի, պիր Նպիսկոպոս պիր ճումհուրիյէթէ
րէյիս ինթիխապ օլունապիլիր, մա մաֆիյս,
պու իքինճի վազիֆէսինին ինգիզասընտա Ն-
պիսկոպոսըղընա հիշ պիր խալէլ կէլմէզ։

Իթիրադարա կէլինճէ, տէրիզ քի, ճիւ-
մանի հիւքիւմտարլար իչիւն պատարագ
վագթընտա եալընըզ տոււա օլունուր, Առա-
քեալըն « Պա խուսուս բատիշահլար վէ պիւ-
թիւն հիւքիւմտարլար իչուն տոււա էթմէք »
(Ա . Տիմ . Բ . 1) եօլունտաքի թէնպիհի
միւնէպինճէ : Ֆագաթ շուրասընտա պիւմէք
լագըմ տըր քի օ տուալար վէ թէմէնիլէր,
րուէնայը րուհանիլէրին զիքրինէ մախսուս
օլան ֆըզրատան վէ չօզ տէֆա պատարագ-
տան տիշարտա իճրա իտիլիլէր : Պիզզաթ
Րուսիատա պիլէ « Որ օրհնես զայնոսիկ »
տոււսը արասընտա Զար իչուն տոււա օլու-
նուր :

Սատէ քահանայ Բաթրիգլէրին — պատա-
րագտա զիբր օլունմըն օլտուղը գաթիէն սա-
հիւ տէյիլ տիր, չիւնքի տաճա պու կիւն
պիլէ մէվճուտ օլան միւսինն վէ միւնթէնէմ
իւթիյարլարմըզ վար տըր քի օ սուրէթլէ
պիր զիբր օլունմատըլընա տիրի շահալէն
տիրլէր: Հէմ Աստուածաբանութիւնճա տա
էօլէ պիր յիշատակութիւն նա մէշրու տըր:
Շայէտ պէօլէ պիր շէյ պիր վազըթ վազը
օլմուշ օլսա պիլէ, մութլագա օ քահանալա-
րըն ճիսմանի վազիֆէլէրի իչուն օլմուշ օլա-
պիլիր: Յագաթ շու գատարը ինքեար օլուն-
մազ քի, օրատա Պասրիարֆ քէլիմէսի Բաթ-
րիգ քէլիմէսինն էրմէնիճէ պիր թէրճէմէսի
մագամընտա գուլլանըլմը տըր, եօզսա, էյէր
թամ մանայը ապիյեպինէ գուլլանըլմը օլսա
քիւլլիյէն եանըլ օլաճագտը: Վէ, մատամ
քի ծնլար Բաթրիգ օլտուղլարը իչուն զիբր
օլունմուշտըրլար, պինտէն ալէյօ, Յաքիգ-
լիլի օլմայան սաըլ Պատրիարք տա զիբր օ-
լունմամալըտըր, եօլունտաքի իտտաա ման-
թըգճա պիր եանըլտըր: Պունա սօֆիզմ վէ
եախօտ մանթըգտան պի խապէրլիք տէրլէր:

Աճէպա, Պատրիարքը վէ Եպիսկոպոսըզ կիպի վէզայիֆի բուհանիյէ պիր իսլամ Բա- տիշանըն վէբոտիյի վազիֆէլէր տիրէր, տէ- մէք մի իսթէնիլիյօր: Պու կիպի պիր հերե- տիկոսութիւն իզրար էլլէլէն քիմէ պու- լունմազ զանն իտէրիմ: Շու հալտէ Պաս- րիարքութիւն իլէ Բաթրիգլիյի եէկտիկէրլէրին- տէն թէֆրիգ իթմէյի պիլմէք լազլմ տըր- պիրինճիսի, Ալլահտան վէ Բիւրսիյի Շէրիֆ- տէն տիր, իքինճիսի, Օսմանլը իմէրաթօ- ընտան տըր. պիրինճիսի, բուհանի տիր. իքինճիսի, ճիսմանի տիր. պիրինճիսի, ու- մումի, միւսթագիլ վէ էսասի տիր. իքին- ճիսի, խուսուսի վէ բէյիսի բուհանի օլմազա մէնութ վէ արազի տիր. իլթէ Արհի. Ար- փիարեան Արքեպիսկոպոսըն իզաճ իթտիյի, տօղրու վէ հազըզի վէ հէր կէօնա միզաճ- տան միւսթագիլ օլան Գաթօլիք թալիմա- թը պուստան իպարէթ տիր: Պիզ, ալըըմը օլան ճէմաաթլարա պէնզէմէյիզ. վէ իլթէ պու սէպէպէ մէպնի տիր քի, եէնի Կաթու- ղիկոսըմըզ ինթիխապ օլուպ Բիւրսիյի Շէրի- ֆին թաստիգինէ իզթիրան էտէր էթմէզ, հէման ֆէրուսը սապահը, — Բաթրիգլիք իրասէսի սատըր օլմազտան չօզ էվլէլ, — Ե- պիսկոպոսըր վէ քահանալար թարաֆընտան կէրէք ձայնաւոր կէրէքսէ թիւ պատարագ էսնասընտա Ս. Բաբատան սօնրա օնը շու սուրէթլէ « Եւ զերջանիկ ՊԱՏՐԻԱՐԿՆ մեր զԱ. Ա. » յիշատակել իտէրիզ:

Ամեն. Թէրզեան Կաթողիկոսըն բէյիսի բուհանիլիյինի թանըտըղընա տէլալէթ իթ- մէք իւզրէ օնա Բաթրիգլիքտէն սազըթ օլ- տուգտան սօնրա պիլէ Պասրիարք իւնվանընը վէրէն եալընըզ Բօմա տէյիլ տիր — հալպու- քի, պիզ Գաթօլիքլէր իչուն պու զատարը տա քեաֆի վէ մէճպուրի տիր. — Բումլար, բուհպան վէ ավամ, Պատրիարք, Տեղապահ, Վէքիլ, Լօղօթէթ վէ սայիրէ օնա պու իւն- վանը վէրմէքտէն մատա, Պատրիարք կիպի օնա պէօյիւք պիր թէվլէճճիւհ իլէ զիյարէթ իտիյօր, վէ Բիլիսա հուգուգընըն մուհաֆա- զասընտա մէթին գալմասը իչուն քէնտիսինի թէշճի տէ իտիյօրլար: Քէզալիք Սպանիա, Պէլճիզա գրալլարը կիպի գրալլար, Յրանսա

վէ սայիրէ նազըրլարը վէ սէֆիրլէր այնի Patriarche իւնվանըլա քէնտիսինէ եաղը- յօրլար, վէ ճիւմլէսի տէ, ալիմանէ վէ պի- թարաֆանէ թաստիգ իտիյօրլար քի, Բաթ- րիգլիքտէն սազըթ օլմաք Պատրիարքըզտան տա մահրում օլմազ մանասընը թէզամմուհ իթմէզ:

Պագաթ դարազ Ֆիքրի քէօրլէնտիրիր: Միզաճբէրէսթլիքլէ իսթէմէ Տէք, իզաը շու- րիլ իթմէք, քիւֆր էլլէմէք, սրբապղծու- թիւնտա պուլունմազ, պուսլարըն քեաֆֆէ- սի տէ, հատտը զաթընտա մէթին էսասլար իւզէրինէ պինա էտիլմիլ օլան պիր հազի- գաթը եալան չըգարմազա, եախօտ թէպտիլ իթմէյէ գատիր տէյիլտիրլէր: Ասիլէրին քէօր միզաճը, նէ քիլիսանըն զանուկարընը վէ նէ տէ մէրպուլիյէթլէրի եալընըզ Բիլիսանըն բէյիսի էքրէմի վէ հաքիմի Ս. Բաբա հազ- րէթլէրինէ օլան քիմսէլէրի տիւշարը թէ- զէլզիւլ իտէմէզլէր: Ս. Բաբա հազրէթլէրի թաեին իտէր, տէվամ իթտիրիր. Բրիստոսըն գուզու վէ գօյուկարընըն իւզէրինէ սալա- հիյէթտար Հաքիմ Օ տըր, վէ կէրէք Հայաս- տանտա կէրէքսէ քիւրբէյի արզըն հէր թա- րաֆընտա պուլունան հազըզի Գաթօլիքլէր քէմալը մէսէրրէթլէ օնա իթաաթ իտէրլէր:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ն Ռ Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Շ

Ս. Քահանայապետին հիւանդութեան կրկնու- մին մասին շրջաբերուած լուրերը բոլորովին ծուռ և չինծու են: Ապաքինումը կանոնաւոր ընթացքի մէջ է: Բժիշկները դադարեցուցեր են իրենց արտակարգ ալ- ցիլութիւնները: Ն. Սրբապետութիւնը Վատիկանի ճե- մապարբու մէջ պտոյտ մը ըրեր է. սկսեր է ըն- դունիլ ունկնդրութեան եկողները:

Հռոմ, Կոստանդինեան տօներու առթիւ, Նոր Կիրակի օրը, սկսած է ժողովուրդը խուռնընթաց այցելել Ս. Յովհաննու Լատերանի պատրիարքական եկեղեցին, Ս. Պետրոսի Վատիկանի և Ս. Պօղոսի պարիսպէն դուրս կաթողիկէները:

Յաւիտենական քաղաքին թեմական վարչու- թիւնը և ժողովրդապետները կը կազմակերպեն կարգն ու ամենօրեայ ընթացքը զանազան խումբերու, որոնց իւրաքանչիւրին առջեւէն կը յառաջանայ թափօրի խաչը:

✱ Cultores Martirum Եղբայրութիւնը կատարեց Կոստանդինեան Յորելեանի բացումը Ս. Կալիքստոսի զեանագամբաններուն մէջ՝ ձայնաւոր պատարագով մը, զոր մատուց ար Վալ Գերասպոյծառը, Սանթա Մարիայի գերման վարժարանին տեսուչը:

Պատարագէն վերջը Մարուքի ուսուցիչը, Կոստանդինեան տօներու մասնաժողովին քարտուղարը, բանախօսութիւն մը ըրաւ զեանագամբաններէն զուրս:

Կէսօրէն վերջը տեղի ունեցաւ թափօր մը, որ կ'երկարէր երկու հազարամէկը տարածութեան մը վրայ, ասոր կը մասնակցէին բիւրաւոր մարդիկ:

Գասեթա կորդինայը իր օրհնութիւնը տուաւ խորանի մը առջեւ, որ կանգնուած էր Ս. Կալիքստոսի զեանագամբաններուն վրայ, բաց օդի մէջ:

Հաւոմ գացողներուն թիւը անհամար է:

✱ Սպանիոյ մէջ Գասեթի կաթողիկէները մեծ ցոյց մը ըրին Մ. Ռոմանոսէսի ընթացքին դէմ բողոքելու համար: Եպիսկոպոսին պալատին առջեւէն անցած ատենին, Ն. Արհի. կողմէն օրհնուեցան և քաջալերուեցան. ապա կառավարութեան պալատը գացին, կառավարիչը խոստացաւ պատշաճ տեղեկագիր մը պատրաստել և պատկանելի իշխանութեան հաղորդել:

Նոյն նպատակաւ կաթողիկէ համախմբութիւն մը եղաւ Գորուշայի մէջ. Հիւսիսայի եպիսկոպոսն ալ հովուական թուղթ մը հրատարակեց:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Ապրիլ 10/ին, Հինգշաբթի օրը, Կաթողիկոսարանի պահին մէջ տեղի ունեցաւ Առաք. Թեմի քահանայից աստուածաբանական ժողովը, և զբաղեցաւ ինչ ինչ ծանրակշիռ խնդիրներով:

✱ Արհի. Աւետիս Արքեպիսկոպոս Արփիարեան առաջիկայ հինգշաբթի պիտի մեկնի Կ. Պոլսէն դէպ ի Հաւոմ, Կոստանդինեան Յորելեանի հանգէսներուն ներկայ գտնուելու համար:

✱ Երեքշաբթի օրը, ըստ սովորութեան, գումարուեցաւ կրօնական ժողովը և պարագեցաւ կարեւոր խնդիրներով:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Մեծ պետութեանց ծանուցագրին պատասխան տուին դաշնակիցները: Պուլկար հեռ. գործակալութիւնը այս առթիւ հրատարակեց հետեւեալ զեկոյցը. Հագսուքիւն կնկելու համար եւ անկեղծօրէն փափաքելով դիւրացնել մեծ պետութեանց գործը, դաշնակիցները կ'ընդունին այս վերջիններուն պայմանները միջնորդութեան համար, հետեւեալ վերապահումներով.

— 1. Թրակիոյ սահմանագլուխը վերջնապէս գծելու ժամանակ մեծ տնտեսանց պայմանները պիտի առնուին իբր հիմ եւ ոչ թէ իբր վերջնական գիծ: 2. Եզեականի կողմէն թուրքիոյ կողմէ պիտի ձգուին դաշնակիցներուն: 3. Դաշնակիցները այնպէս կը նկատեն թէ պէտք է կանխաւ հասկնան Ալպանիոյ ծագեալ սահմանագլուխները, յուսալով որ անոնք համաձայն պիտի ըլլան իրենց Լոնսոն առաջարկած սահմաններուն: 4. Պատերազ. տուգանքի պահանջումը պէտք է որ սկզբունքով ընդունուի... 5. Դաշնակիցները կ'ընդունին որ պատերազմական գործողութիւնները դադրին անմիջապէս որ յիշեալ պայմանները նպաստաւոր ընդունուին թիւն զսնեն:

✱ Սեւ Լեռը կը շարունակէ բռնուի կերպով աւերակծել Եքստան, հակառակ հրամանին մեծ տէրութեանց, որոնք վճռեցին Եքստայի Ալպանիոյ կցումը, և իրենց վճիռը յարգել տուաւ համար հարկ եղածին սկսած են ձեռնարկել:

✱ Կասկածելի անձեր հետզհետէ կը վտարուին Պոլսէն:

✱ Կ'ըսուի թէ Չաթայճայի կողմը Պուլկարները մեծ ճակատամարտի մը կը պատրաստուին:

✱ Կ. Պոլսոյ նախորդ գաղ. դեսպանը, Մ. Գոնսթան, մեռեր է Գաղղիոյ մէջ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	225
Թուրք Առաքելական	227
Տէր Կովսէս Բահանայ	229
Թուրք հովուական	230
Եօքնեակ Քրիստոնէի	232
«Քոյր եկեղեցի»ներու բոյութեան տպար անոյց մը	232
Կենսագրական տպարկ մը Բ. Թագուհի ձեռնարկեանի վրայ	233
Սաւառնակը	235
Պատրիարք վէ Բաքրիզ Բէլիսէլի	336
Տեղեկագրական	239

ԱՐՏՈՐԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՐԱՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանց Երաբարքերի, Բերա, Պայրամ փողոց քիւ 5, Կ. Պոլս

ԹՈՒՂԹ ՀՈՎՈՒԱԿԱՆ
ՊՕՂՈՍԻ ՊԵՏՐՈՍԻ ԺԳ.Ի
ՊԱՏՐԻԱՐԻՔԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՊԻՈՍ Ժ. Ս. ԳԱՀԱՆԱՅԱՊԵՏԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ՎՐԱՅ



Կ. ՊՈԼԻՍ
Տպարան «Կ. ԱՐՁԱԳԱՆԳ» Ի
1913



ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ
ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.
ՊԱՏՐԻԱՐԺ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՅ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԳԱԶԷՆ ՀՌՈՎՄԱՅ

Սիրեցեալ Հոգեւոր Որդւոց մերոց, Առաքելաշան աջակցաց,
Գեռ. Տ. Ժողովրդապետաց եւ Պատուական Վարդապետաց
Աւագ Թեմիս Ողջոյն եւ Աստուածաւանդ օրհնութիւն

Սիրեցեալ Որդեակի,

Կաթողիկէ Հռովմէական սուրբ եկեղեցին, բազմաթիւ երկնապարզեւ առանձնաշնորհումներու հետ, ընդունած է նաեւ իւր աստուածային Հիմնադրէն երկրիս վրայ ստանձնած սրբազան դերը կատարելու համար, գործելու և կառավարելու անբռնարարելի ազատութիւնը, Փրկչին այն խօսքերով զորս ուղղեց Առաքելոցը. «Դնացէ՛ք այսուհետեւ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս... և ես ընդ ձեզ եմ մինչեւ ի կատարած աշխարհի»։ Իհրտ ուժեր, խօլ պայքարներ՝ ինչպէս կը վկայեն եկեղեցական պատմութեան էջերը, ժամանակ ժամանակ երեւան ելլելով, ի զուր դժոխային ճիգեր թափած են այդ ազատութիւնը խափանելու. վասն զի այդ բռնաբարութիւնք՝ թէեւ երկարաձիգ և ահռելի, սակայն իսպառ տեւողու-

թիւն մը չեն կրցած ունենալ, և Քրիստոսի եկեղեցին իւր բնածին ազատութիւնը վերստին ձեռք բերել յաջողելով սկսած է իւր փրկարար ձեռնարկը շարունակել աւելի մեծ թափով՝ ի մեծ հիացումն բովանդակ աշխարհի։

Այդ անուրանալի ճշմարտութիւնը ակնյանդիման կը տեսնուի եկեղեցւոյ նոյն իսկ ծագման պահուն. կռապաշտութեան յարուցած վայրագ հալածանքները, ամբողջ երեք դար, ամէն ջանք ի գործ դրին խողխողելու համար նորածին եկեղեցին նոյն իսկ իւր որրանին մէջ՝ իւր իսկ արիւնովը. և կայսրն Դիոկղետիանոս, հեթանոս բռնաւորներէն ամէնէն վերջինը և ամէնէն ահաւորը, երբ Նիկոմիդիոյ հրապարակին վրայ «Ի յիշատակ իսպառ ջնջումի քրիստոնեայ անուան» եր-

կու բարձրաբերձ կոթողներ կը կանգնէր, երբէք չէր կրնար երեւակայել թէ եկեղեցին իւր գետնադամբաններէն դուրս ելլելով, ազատութեանը նախօրեակին հանդէպ կը գըտնուէր: Յամին 313 Միլանու հրովարտակը երեքդարեան դառն հալածանաց տապալոււմը կը հռչակէր:

Քրիստոսի սիրասուն Հարսը, այս անգամ, տիեզերական շողշողուն պերճութեամբ իւր երկնաւոր փեսային կեանքին, նախ Չարչարանաց և ապա փառաւոր Յարութեան յատուկ ընորոշ նկարագիրը իւր վրայ կը պատկերացնէր:

Սքանչելի զուգադիպութեամբ եղած է որ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ սուրբ Չարչարանաց և Յարութեան յիշատակին նուիրուած այս սրբազան օրերուն մէջ, Գերիմաստ Վարդապետն և Դուին եկեղեցւոյ Պիոս Ժ. Սրբազան Քահանայապետը, ներկայ տարւոյս Մարտ 8ին, Մեծին Կոստանդիանոսի միջոցաւ եկեղեցւոյ տրուած այս ազատութեան դէպքին դարագլուխը ըստ պատշաճի տօնելու համար, Առաքելական կոնդակաւ մը բարեհաճած է ամբողջ կաթողիկէ տիեզերքին շրնորհել Յորեկան մը ներողութիւններու, որ մեծ ցնծութիւն կը պատճառէ անտարակոյս, ինչպէս համօրէն աշխարհի հաւատացելոց, նոյնպէս մեր Հասարակութեան:

Այդ Առաքելական Կոնդակին կարեւորութիւնը, մենք ալ, Գերապատիւ Վարդապետք և սիրեցեալ ժողովուրդք, ի նկատի առնելով հրամայեցինք զայն թարգմանութեամբ հրատարակել մեր պաշտօնական Արձագանգ շաբաթաթերթին մէջ, և ներկայիւս կը հրամայենք Աւագ Թեմիս համօրէն Յ. Յ. ժողովրդապետաց, որպէս զի նոյնին մէջ պարունակուած հաւատացելոց վերաբերեալ զըլխաւոր գիտելի կէտերը, յատկապէս կիրակի օրերը Ս. Պատարագի ատեն, պարզեն և մեկնեն ժողովրդեան, միանգամայն յորդորեն զիրենք օգտուելու այն փրկարար զանձերէն, զորոնք եկեղեցին արտակարգ կերպով այս օրերուն մէջ ամէնուն կը բաշխէ առատօրէն:

Դարձեալ գիտնալով թէ Յորեկանի առթիւ կաթողիկէ համօրէն ոստաններու և քա-

ղաքներու մէջ, յատկապէս ի Հռոմ՝ կեդրոնը ուղղափառութեան, մեծ շքով եկեղեցական հանդէսներ պիտի կատարուին, և փափաքելով որ մեր հասարակութիւնն ալ գոնէ հեռուէն մեր ուղղափառ եղբարց մասնակից ըլլայ, ուղեցինք որ Աւագ Թեմիս համօրէն եկեղեցիներու եւ հրապարակական մատուռներու մէջ հանդիսիւ տօնուի Յորեկեանը: Վասն որոյ ներկայիւս կը անօրինենք եւ կը հրամայենք որ Ս. Աստուածածնայ նուիրուած ամսոյն Մայիսի առաջին օրը որ է միանգամայն տօն Համբարձման Տեառն մերոյ, առաւօտ, երբ աւելի հաւատացեալք կը յաճախեն, ժամու մը տեւողութեամբ Սրբութիւն Սրբոց զրուի ի բազմոցի յերկրպագութիւն հաւատացելոց. եւ հրապարակական ազօթքներ մատուցուին, եւ ապա Սրբութիւն Սրբոցով օրհնութիւն տրուի:

Մատուցուելիք ազօթքներն հետեւեալներն են. 1. «Մայր սուրբ սքանչելի» ազօթքը. 2. «Վասն սրբազան Պապին մերոյ ևն. Տէր ողորմեա», երկուս. 3. Հինգ Հայր մեր, հինգ ողջոյն, հինգ փառք Հօր. 4. «Մայր հաւատոյ» ևն.:

Աստանօր կը դնենք Առաքելական կոնդակին պարունակած հրահանգը, զոր կը պարտին գիտնալ հաւատացեալք՝ ստանալու համար ներկայ Յորեկանի լիակատար ներողութիւնը, որ ըստ հրամանի Ս. Քահանայապետին կրնայ մերձեցուիլ նաեւ քաւարանի հոգւոց:

1. Տեւողութիւն Յորեկանի:

Ի հրամանէ Սրբազան Քահանայապետի, վերոյիշեալ Յորեկանը կը սկսի մեր ներկայ կոնդակին հրատարակուած օրէն և կը տեւէ մինչեւ ցտօն Ա. Յղութեան Ս. Կոստին, որ է 9 Դեկտ.ի ներկայ տարւոյս՝ փաղառութեամբ:

2. Յորեկանի ներողութիւնը ստանալու պայմանները:

Այդ պայմաններն երեք են.

1. Այցելութիւնք որոշեալ եկեղեցիներու,
2. Ողորմութիւն աղքատաց,
3. Ընդունելութիւն Ս. Խորհրդոյ Խոստովանութեան և Ս. Հաղորդութեան:

Այցելութեան համար որոշուած եկեղեցի-

ները մայրաքաղաքիս համար հետեւեալներն են . Ա . Եկեղեցի Ա . Յղութեան Հարց Միութարեանց Վիեննայ ի Բանկալթի . Բ . Ա . թողանիստ եկեղեցի Ս . Աստուածածնի . Գ . Ամենասուրբ Երրորդութեան եկեղեցի . Վեքոյիչեալ երեք եկեղեցիներու երկերկու այցելութիւնք պիտի կատարուին . գիւղօրէից մէջ ուր մի միայն եկեղեցի կամ մատուռ մը կը գտնուի, նոյնին վեց այցելութիւնք պիտի կատարուին :

Իսկ ուր հրապարակական եկեղեցի կամ մատուռ չի գտնուիր, հաւատացեալը կրնայ իւր դիւրութեանը համար վերոյիշեալ վեց այցելութիւնները կատարել ուրիշ տեղ մը, իւր ընտրած ու է Կաթողիկէ եկեղեցիներէն կամ մատուռներէն միոյն մէջ :

3. Պարտադրեալ աղօթք իւրաքանչիւր այցելութեան:

Հաւատացեալը մէն մի այցելութեան ժամանակ պահ մը պարտի աղօթել Ս . Քահանայապետին դիտաւորութեանը, որ գլխաւորաբար կը բովանդակէ հետեւեալ կէտերը . Ա . Կաթողիկէ Եկեղեցւոյ և Առաքելական Ա . թողոյ յաջողութիւն և բարձրացում . Բ . հերետիկոսութեանց ջնջում . Գ . Համօրէն մոլորեցող դարձ . Դ . Քրիստոնեայ թագաւորաց և իշխանաց միաբանութիւն . Ե . համօրէն հաւատացեցող միութիւն և խաղաղութիւն . եւն . եւն . :

4. Պարտադրեալ դրամական ողորմութիւն:

Այդ դրամական ողորմութիւնն իւրաքանչիւրն պարտի ընել ըստ իւր կարողութեան . ազատ է սակայն տալու զայն կամ աղքատաց և կամ եթէ այդպէս պատշաճ համարի՝ բարեպաշտական հաստատութիւններէն միոյն :

5. Պարտադրեալ Ս . Խորհուրդք:

Յորհլեանի ներողութիւնը շահելու համար որոշուած միջոցին մէջ հաւատացեալը կը պարտի ճշմարիտ զղջմամբ մօտենալ Ս . Խորհրդոց Ապաշխարութեան և Հաղորդութեան :

6. Առաքելական տրամադրութիւնք վերոյիշեալ պայմանները կատարելու անկարող անձիւններու:

Ս . Քահանայապետը ներկայ Յորհլեանը

շահելու շնորհքը կ'ընէ նաև անոնց որոնք դժբախտաբար հիւանդութեամբ կամ բանտարկութեամբ կը տառապին եւ կամ ու է կերպով ծանր արգելքի մը ենթարկուած ըլլալով վերոյիշեալ պարտաւորութիւնները կամ անոնցմէ մէկ քանիները չեն կարող կատարել . Ուստի այսպիսիներու համար իշխանութիւն կը շնորհէ խոստովանահարց, որ կարող ըլլան նոյնները փոխել ուրիշ յարմարագոյն բարեպաշտական գործոց և կամ նոյն ներողութիւնը ստանալը ուրիշ մօտակայ ժամանակի մը յետաձգել . նմանապէս դեռ առաջին Հաղորդութիւնը ընդունելու ընդունակ չեղող աղայոց տնօրինել Հաղորդութեան պարտաւորութիւնը .

6. Խոստովանահարց շնորհուած

առանձնաւորութիւնք՝ առթիւ Յորհլեանի:

Դարձեալ Ս . Քահանայապետը անխտիր ամէն հաւատացեալի աղատութիւն կը շնորհէ, Յորհլեանը շահելու նպատակաւ պահանջուած Խոստովանութեան խորհրդոյ պարտականութիւնը կատարելու համար՝ ընտրել որ եւ է քահանայ, որ հաւանեալ ըլլայ խոստովանութիւն լսելու : Իսկ մայրապետաց և անոնց նորրնձայից նոյնը կը թոյլատրէ, միայն թէ մայրապետաց խոստովանութիւնը լսելու յատկապէս հաւանեալ քահանաներէն մին ըլլայ այդ : Արդ իւրաքանչիւրին իրեն ընտրած այդ որոշեալ խոստովանահայրը իրեն զիմոյ խոստովանորդւոյն մի միայն այն անգամուան համար (այսինքն Յորհլեանի ներողութիւնը շահելու համար պահանջուած խոստովանանքի պարտականութիւնը կատարած պահուն) և այդ, միայն յատենի խղճի, կարող է արձակել ամէն բանադրանքէ, կախակայութենէ և եկեղեցական դատաւնիքէ, որոնք տրուած են յիրաւանց կամ Առաջնորդի մը կողմանէ և որ եւ է պատճառաւ վերապահեալ են, կամ վիճակաւորներու կամ Ս . Քահանայապետին կամ Ս . Աթոռոյ նոյն իսկ առանձինն եղանակաւ, և որոնց արձակումը հասարակօրէն բովանդակուած չէ ամէնէն ընդարձակ առանձնաշնորհումներու մէջ որով այդ խոստովանահայրը փրկարար և պատշաճ ապաշխարանք զննել յետոյ պիտի

կարենայ արձակում տալ ամէն մեղաց , որ-
չափ ծանր ըլլան և սոսկալի , և նոյն իսկ վե-
րապահեալ վիճակաւորներու , Ս . Քահանա-
յապետին և Առաքելական Ս . Գահուն : Գա-
լով հերետիկոսութենէ դարձողներուն , ա-
սոնք ըստ կանոնական իրաւանց իրենց մո-
լորութիւնը հերքելէ և անոնցմէ հրաժարելէ
վերջը կրնան արձակում ստանալ :

2 . Այդ խոստովանահայրը պիտի կարե-
նայ նաեւ փոխել ուխտերն ու երդումները ,
նոյն իսկ Ս . Քահանայապետին վերապահեալ-
ները , ուրիշ բարեգաշտական գործերու , ի
բաց առեալ 1 . ողջախոհութեան և կրօնա-
ւորութեան ուխտերը . 2 . երրորդի մը
նկատմամբ պարտականութիւն բովանդակող-
ները . 3 . մեղքէ զգուշանալու համար զըր-
ուած սպաշխարութեան ուխտերը . եթէ
խոստովանահօր կողմանէ եղած այդպիսի
փոխանակութիւն մը նոյնպէս մեղքէ ըզ-
գուշանալու մասին ազդեցիկ չըլլայ . 3 .
այդ խոստովանահայրը պիտի կրնայ նաեւ
տնօրինել սուրբ աստիճանները արգէն ըն-
դունած սպաշխարողները՝ ամէն ծածուկ ան-
կանոնութենէ որ կրնայ արգելք ըլլալ նոյն
աստիճաններուն կիրառութեան և կամ բար-
ձրագոյններու ընդունելութեան :

8 . Խոստովանահարց իշխանութեան սեղմումը :

1 . Յորեւանի կոնդակով Ս . Քահանա-
յապետը կը յայտարարէ թէ չի տար իշ-
խանութիւն տնօրինելու միւս որ եւ է ան-
կանոնութիւնները որ յառաջ եկած են ծա-
ծուկ կամ ծանօթ կամ հրապարակական յան-
ցանքէ մը կամ պակասութենէ նաեւ ուրիշ
որ եւ է կերպով կրուած անընդունակութենէ
և ոչ ալ կը չնորհէ որ եւ է իշխանութիւն
վերոյիշեալները տնօրինելու կամ վերա-
տին ատակ ընելու՝ ընդունուած աստիճան-
ներուն գործածութեան կամ բարձրագոյննե-
րուն ընդունելութեան , նոյն իսկ յատենի
խոստովանութեան :

2 . Եւ ոչ ալ խափանուած պէտք է հա-
ջարուի երջանկայիշատակ Բենեդիկտոս ԺԴ . ի
Խոռհուրդն Ապաշխարութեան սահմանադրու-
թիւնը :

3 . Եւ ոչ ալ վերջապէս ներկայ առաքե-
լական կոնդակս զօրութիւն մը կրնայ ունե-
նալ անոնց նկատմամբ , որոնք Ս . Քահանա-
յապետէն կամ Ս . Գահէն կամ եկեղեցական
Առաջնորդի եւ կամ Գատաւորի կողմէ յա-
կանէ յանուանէ բանադրուած , կախակայ-
ուած , արգիլուած կամ յիշեալ որ եւ է դա-
տակնքոյ ներքեւ ինկած ծանուցուած են ,
միայն թէ Յորեւանի տեւողութեան միջո-
ցին ապաշխարած և պատկանեալ իշխանու-
թեան կողմէ արձակում առած չըլլայ :

Իսկ եթէ այդպիսինք , Յորեւանի տեւո-
ղութեան միջոցին , կարող չըլլան ըստ դատ-
ման իրենց խոստովանահօր ամէն պահան-
ջութեանքը կատարել , Ս . Քահանայապետը
կը թոյլատրէ արձակում առնուլ յատենի
խոստովանութեան լոկ Յորեւանի ներողու-
թիւնը ստանալու պայմանաւ եւ պարտա-
դրութեամբ հարկ եղածը կատարելու փո-
թով երբ այդ կարելի ըլլայ :

Ահաւասիկ Յ . Յ . Վարդապետք , ասոնք
են այն առաքելական հրահանգները և
տրամադրութիւնները , զորս պարտին Հարք
խոստովանութեան իրենց առջեւ ունենալ
նկատմամբ անոնց , որոնք Յորեւանի առ-
թիւ իրենց պիտի զիմին մեղքերէն ազատ-
ուելու համար :

Բաց աստի , ի հրամանէ Ս . Քահանայա-
պետին կը պատուիրենք յատկապէս ի պաշ-
տօնէ հոգ հոգեւոց ունեցող Յ . Յ . Քահանա-
յից , որպէս զի Բանին կենաց քարոզութիւնը
բովանդակ Յորեւանի տեւողութեան մի-
ջոցին անպակաս ընեն՝ մոլորեալները դարձի
բերելու , բարիները իրենց հաւատարմու-
թեան մէջ աւելի եւս հաստատելու , մէկ
խօսքով ամէնուն խրախոյս և քաջաւեր ըլ-
լալու համար որ Ս . Քահանայապետէն չնոր-
ուած այս փրկաւէտ պատեհ առիթէն ըստ
պատշաճի օգտուին :

Սիրեցեալ որդեակք ի Քրիստոս , ներկայ
Յորեւանս նոր առիթ մըն է մեզի համար ,
ո՛չ միայն մեծամեծ արդիւնքներ զիգելու-
երկնից արքայութեան համար , այլ նաեւ նոր
յօդ մը միութեան եկեղեցւոյ , միութեան

հաւատացելոց իրարու հետ և միութեան՝ անդամներու իրենց գլխուն՝ Քրիստոսի փոխանորդին հետ։ Ահաւասիկ այս միութիւնը պիտի ամրապնդուի անգամ մըն ալ, այս օրերս, առթիւ Յոբելեանիս՝ նախ ազօթքով և ջերմնոսնդութեամբ, ապա հլու հպատակութեամբ առ Ս. Գահն Հոռոմայ։

Ներկայ դժուարին պարագաներու մէջ գտնուող Քրիստոսի պատերազմիկ եկեղեցին մեր օրերէն աւելի երբ և ո՞ր ժամանակ աւելի պէտքը աւելի զգալի ընծայած է։ Ե՞րբ աւելի դժոխային յարձակումներու ենթարկուեցաւ նա երբէք. բաղմազդի մոլորութիւնք՝ անոր ուղղամիտ վարդապետութիւնը խախտելու, անդուսպ կիրքերու ժայթքումներ՝ անոր սրբութիւնը, մաքուր բարոյականը աղարտելու, վարչական անխրաւ ապօրէն օրէնսդրութիւնք՝ անոր ազատութիւնը ձեռքէ կորցնելու, արդիականութիւնը՝ իր թաքուն թոյնով անոր անյեղլի սկզբունքները տկարացնելու, աշխարհականացումի չարողին՝ անոր կղերը ստրկացնելու ինչպիսի՞ նորահնար ջանքեր չեն ընել զարդիս։ Եկեղեցւոյ համայն թշնամիք թէեւ իրարու մէջ անմիաբան, իրարու հակառակ, այլ մէկ կէտի վրայ ամէնքն ալ միացած են կարծես, ընդհանուր դաշինք մը կռած են վերջնական գրոհ մը տալով տապալել Քրիստոսի Ս. Ե-

կեղեցին, որ իր ճակտին վրայ բարձր կրելով իւր աստուածային հիմնադրին Դունք դժոխոց մի՛ յաղթահարեցեն անջնջելի խոստումը, կը սահի կ'անցնի անխռով ամէն փոթորիկներէ և միշտ կանգուն կը մնայ և պիտի մնայ ցկատարած աշխարհի։


Այս ահարկու թշնամեաց դէմ հաւատացեալը ունի զէնք մը միայն. թէեւ առաջի աշխարհի անդօր և տկար, այլ առաջի Անմահին ուժեղ և զօրաւոր. այս է իւր աւելիքը, և իւր անդրդուելի հաւատարմութիւնը առ գերագոյն Դուռն Եկեղեցւոյ։ Բարձրացնենք ուրեմն ամէնքս ալ, կղեր եւ ժողովուրդ, բարձրացնենք մեր պաղատանաց հառաչանքները մինչեւ յԱթոռն Բարձրելոյն. միանգամայն համախմբուի՛նք եկեղեցւոյ ընդհանուր Պետին՝ մեր ամէնուն սիրելի Հօր՝ Ս. Քահանայապետին շուրջը. փարի՛նք իրեն սիրով և անքակ միութեամբ, ուխտենք իրեն անսասան հաւատարմութիւն և իրեն հետ ի միասին ազօթենք, որպէս զի բարեբար Փրկիչն իւր Անարատ Մօր Ս. Կուսին հզօր բարեխօսութեամբ ողորմի վերջապէս և կարճեցնէ այս ցպւոց օրերը և չնորհէ մեզ ամենեցուն ցնծութիւն խաղաղութեան աստ, և երջանկութիւն յաւիտենական՝ ի հանդերձ եկումն։

Տուեալ ի Կաթողիկոսարանէս որ ի Բերա Կ. Պոլսոյ, ի 6 Ապրիլի 1913,
Եւ Պատրիարքութեանս մերոյ յերոդոսմ ամի։

(Ստորագրեալ) ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.

Ե. ՊԱՏՐԻԱՐԿ ՏԱՆԵՆ ԿԻՒԻԿԻՈՅ

ԳԵՈՐԳ Ծ. Վ ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻԿԱՆՈՒՄԵՏ



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]



